



# ԱՆԱԿԻՏ

## ՀԱՆՐԻՍ ԱՐՄԵՆԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԲԵՍԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ 1900

ՀՈԳՏԵՄԲԵՐ


ԹԻԻ 12

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞՞՞՞ Ե՞՞՞՞ Ե՞՞՞՞ հոգին չՅարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս սխտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԵ

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS



THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

CHICAGO, ILL.

1914

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS  
1215 EAST 57TH STREET  
CHICAGO, ILL. 60637  
TEL. 733-8800

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

# ԱՆԱՏԻՏ

ՀԱՆՁՆՍ ԿՄՍԵԱՑ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

ԹԻԻ 12

## «ՎԱՐԳԻ ԵՒ ՍՈՒՍԱԿ»ԻՆ ԱՂԲԻՒՐԸ

—o—

«Անահիտ»ի մէջ հրատարակել սկսելէ առաջ «Վարդ եւ Սոսակ»ի քերթուածին աշխարհաբար թարգմանութիւնը, ուղեցի գիտնալ թէ այդ գործը օտար բնատրպարի մը նմանողութիւնը չէ՞ր արդեօք: Լը Վայեան տը Տլորիվալ, որ զայն ֆրանսերէնի թարգմանած է, կը նկատէ զայն իբրև հայկական ինքնատիպ արտադրութիւն մը. Վենետիկի Մխիթարեանները իտալական թարգմանութիւն մը հրատարակած են, ուր նմանապէս զայն կը ներկայացնեն իբրև հայ ուղեղի մը ծնունդը: Հայոց գրականութեան մասին երեւցած հայերէն կամ ֆրանսերէն գրքերու կամ ուսումնասիրութեանց մէջ, այդ քերթուածը հայկական ստեղծագործութիւն մը համարուած է: Իմ մեցի Վիեննայի եւ Վենետիկի Մխիթարեաններուն, որոնք պատասխանեցին թէ չէին ճանչնար օտար ո եւ է աղբիւր մը որմէ ներշնչուած ըլլար մեր Խօսնացը: Որոշեցի ուրեմն հրատարակել աշխարհաբար թարգմանութիւնը այդ վիպակին, իբրև «հայկական» գործ մը եւ իբրև էջ մը որ մասնաւորապէս շահեկան եւ ընդհանրաճառ արժանի էր սա տեսակէտով որ մեր նախնեաց «կրօնական» գրականութեան քիչ մը մտայլ ու միօրինակ ամբողջութեանը մէջ բացատրութիւն կազմող միակ ծաղիկն էր որ, թէպէտ միատիպական ներքին բուրուսով մը նորէն խնկուած, բնութեան ու սիրոյ վառ ու ազատ գոյներովը կը խայտայ:

Արդ, այս ծաղիկը օտար հողի վրայ բուսած եւ օտար ձեռքերով ոռոգուած ծաղիկ մըն է եղեր: Հիմա, ա՛լ կարելի չէ այդ մասին տարակուսիլ: «Վարդ եւ Սոսակ»ն ալ, մեր նախնեաց ուրիշ շատ մը գործերուն պէս, նմանողութիւն մըն է օտար երկի մը, ճապը թուրք բանաստեղծին նոյն տիտղոսով մէկ քերթուածին: Թարգմանութեան հրատարակութիւնն սկսելէ քիչ յետոյ, առիթ ունեցայ տեսնելու Պ Շառլ Ժոնէի մէկ գիրքը. «Վարդը նախնեաց մէջ եւ Միջին Դարուն» (\*), որուն մէջ հետեւեալ տեղեկութիւնները գտայ «Վարդ եւ Սոսակ»ին բնատրպարին մասին.

«Մեր թուականէն շատ առաջ, վարդը ծանօթ ու սիրուած էր Պարսկաստանի մէջ: Սակայն Միջին Դարուն մէջ տեղն է որ ան կը սկսի գրականութեան մէջ երևալ. բայց այնուհետեւ չորս զարշարունակ Իրանի բանաստեղծները զայն երգած են: Միւսնոյն բանը ըրին Արաբներն եւ Օսմանցիներն ալ. անոնց համար վարդը հատընտիր ծաղիկ մըն է, անզուգական թաղուհին տունկերու աշխարհին:

... «Մաստիլ ինչպէս եւ իր նախորդներուն եւ իր մրցակիցներուն գործին մէջ, վարդին ու սոսակին այլաբանութիւնը, որչափ ալ լիակատար ըլլայ, գրեթէ միշտ համառօտ ձեւով մը կ'արտայայտուի. մինչդեռ իրենց օսմանցի նմանողները շատ ընդարձակ ընդլայնում մը տուած են անոր:

«Իրանը Արաբներէն ու Օսմանցիներէն նըլաճուեցաւ, բայց այդ ժողովուրդները զը-

(\* ) Charlest, Jore — La Rose dans l'antiquité et au Moyen-Age. — Paris, 1892.

բախան ազդեցութիւնը կրեցին իրենց յազթահարած ժողովրդին : Արաքները Պարսից բանաստեղծներէն փոխ առին անոնց պայ մանազրական ոճը եւ անոնց երեւակայական յղացումներէն մէկ քանին : Վեց դար յետոյ, միեւնոյն բանն ըրաւ, եւ աւելի լայն չափով, օսմանեան բանաստեղծութիւնը, որուն իբրեւ բնատիպար ծառայեց պարսկական բանաստեղծութիւնը : Անոր պէս դիւրաբաւ զգողութիւ ու հեշտաւէտ անոր պէս իր ներշնչումները զգայարանքներու եւ բնութեան աշխարհին մէջ փնտռելով, չէր կրնար անկից փոխ չառնել սոխակին ու վարդին այլաբանութիւնը . բայց —ինչ որ պարսիկ բանաստեղծութիւնը չէր ըրած, — օսմանեան բանաստեղծութիւնը, զայն փոխ առնելով, դիւցազներգութեան երեւոյթ մը տուաւ անոր :

«Այդ ազգէն բանաստեղծ մը, Ֆազլը, ԺՁ. դարուն առաւ զայն եւ անկից հանեց երկայն բարոյական քերթուած մը, «Կիւլ ու պիւլպիւլ», որուն հերոսներն է Վարդը, հերոսը՝ Սոխակը, եւ որու մէջ կ'երեւան՝ անձնատրեալ՝ առտուան ցօղը, զեփիւռը, նոճին, նարկիսը, սմբուլը, մանիչակը եւ փուշը՝ տարուան չորս եղանակներուն հետ : Սոխակը, զոր խորխտ Վարդը իրմէ կը հեռացնէ եւ զոր գոռոզ Գարունը թաղաւորը կը վռնտէ, զոր Սմբուլը, ցասկոտ փիլիսոփայ, կը նեղէ, յուսահատած՝ անապատները կը փախչի : Նոյն իսկ կը բռնեն զինքը եւ բանտը կը նետեն . բայց Վարդը, Նարկիսէն համոզուած ու իր հիացողին մէկ նամակէն ի գութ շարժած, կը յայտարարէ թէ պատրաստ է անոր ունկընդորթիւն շնորհելու : Մինչդեռ Սոխակը կալանաւոր կը հեծէ, իբրեւ սրտակից Մանիչակը միայն ունենալով, Վաստ թագաւորին բանակները Գարունին երկիրը կ'աւերչտկեն : Աշուհը կը միջամտէ, բայց քիչ ատենէն ծըմեռը կուգայ բոլորովին քանդել վարդի պուրակները զոր ամառը արդէն աւերած էր : Սակայն նոր տարին իր հետ կը բերէ Գարունը, եւ Վարդը կուգայ իր դահը բազմիլ՝ այն բոլոր ծաղիկներուն հետ որ իր արքունիքը կը կազմեն : Իմանալով որ Սոխակը միշտ կապանքներուն տակ կը ծիւրի, կ'որոշէ անոր այցելութեան երթալ, եւ Ձեփիւռէն առաջնորդուած, կ'երթայ իր սիրահարին քով, զոն նիհարցած կը գտնէ եւ այնքան տկարացած որ զինքը տեսնելուն պէս կը նուաղի : Իսկոյն մարդ կը զրկէ իր հօրը եւ կը խնդրէ որ բանտէ

հանեն զայն : Սոխակը թագաւորին առջեւ կը բերուի եւ ազատ կարճակուի : Կ'ուզէ անմիջապէս իր սիրուհւոյն քովն երթալ . մինչդեռ իրեն պատահած արկածներն ու նեղութիւնները կը պատմէ նոճիին՝ որ պալատին պահապանն է, Վարդը ժողովք մը կը գումարէ, ուրուն մէջ բոլոր համախմբուած ծաղիկներուն առջեւ կը խոստովանի թէ համակրութիւն ունի Սոխակին համար : Ձեփիւռ, Սոխակը ներս կը մտցնէ, եւ այլ եւս երջանիկ պիտի ապրի ան՝ Վարդին հետ մէկտեղ :

«Այս է նիւթը այս շնորհալի քերթուածին, որուն վիպական հիւսուածքին ներքեւ, կ'ըսէ Ֆազլը, խորին իմաստ մը կը թաքչի, որովհետեւ վարդը այնտեղ կը ներկայացնէ բանակաւորութեան ծնունդ եղող միտքը, եւ սոխակը՝ սիրտը, եւ այդ երկուքին միացումը մարդկային երջանկութիւնը կը կազմէ : Այս այլաբանութիւնը, եթէ ամբողջապէս ճիշդ ըլլար, պաղութիւն մը պիտի ձգէր Ֆազլըի գործին մէջ . բարեբախտաբար, այս մեկնութիւնը՝ քերթուածը յօրինելէն յետոյ անոր յարմարցուցած է . ինքնին վարդը, այս ամբողջ քերթուածին մէջ, ուրիշ բան չէ բայց եթէ ծաղիկներու թագուհին, որ սիրելիալ էակը կը խորհրդապատկերէ : »

Ժողէի այս ամփոփումէն յայտնի կ'երեւայ որ խօսքն իր քերթուածին յատակագիծը ամբողջութեամբ առած է Ֆազլըի գործէն : Վերջերս թրքական բնատիպարը ձեռք անցուցի, տպագրուած՝ Լայպճիկի մէջ, 1834ին, Եոզէֆ Փոն շամբըր գերմանացի նշանաւոր տաճկագէտին կողմէ, որ գերմաներէնէ տաղաչափեալ թարգմանութիւն մըն ալ կցած է բընագրին : Գերմաներէն ու թրքերէն լեզուներուն անգիտութիւնս ինծի թոյլ չտուաւ մանրամասն բազդատութիւն մը ընել բնատիպարին ու հայկական նմանողութեան միջեւ . միայն կրցայ նկատել որ Ֆազլըի գործը, ծայրէ ծայր ոտանաւոր, ընդարձակ զիւցազներգութեան մը համեմատութիւններն ունի, մինչդեռ խօսքն վիպակը շատ համառօտ է . խօսքն ամփոփում մը ըրած ըլլալու է Ֆազլըի քերթուածին : Կարելի է որ խօսքն նմանողութիւնը գուրկ չըլլայ փոփոխումներէ ու յաւելումներէ . «զեկուցում» որ, բնատիպարէն տարբեր, քրիստոնէական մեկնութիւն մը կը պարունակէ, արդէն կը յայտնէ

հիմնական տարբերութիւն մը , եւ կրնայ ըլլալ որ ամբողջ քերթուածին մէջ հայ նմանողն իր ցեղին ու իր անձին գրոշմը տեղ տեղ հաստատած ըլլայ . թրքագէտ բանասէրի մը գործն է այդ բաղդատական ուսումնասիրութիւնը կատարել :

Ամէն պարագայի մէջ , Համմերի համեմատ , հայերէն ամփոփումը դեղեցկադիտական տեսակետով շատ վար կը մնայ բնագրէն . ահա ինչ որ կը գրէ Համմեր այդ մասին իր թարգմանութեանը նախաբանին մէջ .

«Բոլոր այդ (թրքական) գործերուն մէջ , միակը որ ինքնատուութեան շնորհն ունի եւ դիւրահասկանալի ոճով մը գրուած է , անվիճելի կերպով՝ «Վարդ եւ Սոխակ»ի քերթուածն է , Մեծն Սիւլէյմանի ժամանակակից եղող մեծ Ֆազլըին հեղինակութիւնը : Ո՞վ չէ իմացած պարսկական այն գեղեցիկ միթոսը , որ իրեն նիւթ ունի սոխակին սէրը , կամ աւելի ճիշդ՝ մեծ-սոխակին սէրը վարդին համար : Ամէն մարդ ծանօթ է անոր՝ այդ նիւթին վրայ գրուած արեւելեան ու արեւմտեան տաղերուն շնորհիւ : Բայց ո՞վ երբեք երգիչներու իշխանին ու ծաղիկներու թագուհիին այս վէպին գործողութեանը մասին խօսած , դո՞յն կարդացած կամ անոր վրայ խօսուիլն իմացած է : Ո՞վ գիտէ մանրամասնաբար այն սիրոյ դողոր պատմութիւնը եւ այն բոլոր անձնաւորութիւնները որ անոր մէջ կը գործեն :

«Ճշմարիտ է որ անոր մէկ տկար արձագանքը քանի մը տարի առաջ երեւցաւ Ս. Բեթիւրսպուրիի մէջ տպագրուած հայերէն լեզուով ամփոփումի մը մէջ , որուն հեղինակն է Մարգար Զաքարիա Խօճենց Երևանցի , եւ Բարիդի արքայական մատնագրարանի արեւելեան կենդանի լեզուներու վարժարանին հայերէնի ուսուցիչը , Պ. Լը Վալեան տը Ֆլորիւլա , անոր ֆըրանսերէն թարգմանութիւնը հրատարակեց վիմագրութեամբ : Բայց ո՞չ հայ հրատարակիչը , ո՞չ Ֆրանսացի թարգմանիչը ճանչցած ինչ իսկական աղբիւրն այն լոյսին որուն մէկ ճառագայթը միայն կը ցոլայնեն , որ հազիւ կը շողայ հայ թարգմանչին աստուածբանական ուղեղին կամ Ֆրանսացիին բանաստեղծական արձակին մէջ !»

Յաւալին այն է որ «Վարդ եւ Սոխակ»ի քերթուածին հայ ամփոփիչն ալ , այն յոթ սովորութեան համեմատ զոր ունեցած են մեր

նախնիքներէն ոմանք , ինչպէս եւ այս դարուն մէջ կարգ մը ողբերգութիւններ կամ ազգային երգեր օտար հեղինակներէ փոխ առնող հայ գրագէտները , ո եւ է կերպով հոգ չէ տարած իր քերթուածին նմանողութիւն մը ըլլալն յայտարարելու եւ բուն հեղինակին անունը յիշատակելու :

ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ



ՎԱՐԴ ԵՒ ՍՈՒՍԿ

Շար . (\*)

ԺԴ .

Ու երբ թաղուհին փառաւորապէս գահը բաղմեցաւ ու իր օրիորդներուն հետ հրճուանքի խնջոյք մը սարքեց , իր Սոխակ սիրահարը յիշեց . գուշակելով որ այսքան ձախողակի պատահարներու մէջ խեղճը շատ նեղութիւններ քաշած ըլլալու էր , չկրնալով դիմանալ՝ ուղեց անոր որպիսութիւնը ստուգել :

Ձեփիւռ սուրհանդակը կանչելով ըսաւ . «Իմ խղճայի Սոխակս դեռ բանտն է անշուշտ . կ'ուզեմ որ երթաս գտնես զինքը եւ շուտով ինծի լուր բերես թէ առո՞ղջ է , ինչպէ՞ս է :

Սուրհանդակը դնաց զանի գտաւ վստիակի մը արգելարանին մէջ , սաստիկ հիւանդ ու անզօր , վերջին կէտին հասածի պէս . եւ բարեւելով ըսաւ անոր . «Ինչպէ՞ս ես , աղնի՛ւ սիրահար . իմ թաղուհին , գեղափայլ Վարդը , կ'ուզէ որպիսութիւնդ իմանալ» : Վարդին անունը լսելուն , Սոխակը կիսամու վիճակէն կենդանացաւ , եւ աչքերը բանալով , ըսաւ . «Ե՛հ , ուրեմն սիրուհիս դեռ կը յիշէ՞ զիս» :

Ձեփիւռը ըսաւ . «Այո՛ , ան դրկեց զիս» :

Սոխակը ըսաւ . «Օ՛հ , ա՛նա կը տեսնես զիս եւ իմ տկարութիւնս . եթէ քիչ մըն ալ ուշանայիր , վերջին շունչս փչած կ'ըլլայի . բայց թու քաղցրահնչիւն ձայնդ , անոր անունը տալով , ինծի կեանք պարգևեց , եւ կարծեմ թէ այսուհետեւ ա՛լ չեմ մեռնիր» :

Ձեփիւռը ըսաւ . «Չօրացի՛ր եւ քա՛ջ եղիւր , վասն զի Վարդ թագուհին կը սիրէ քեզ , եւ ուրախ պիտի ըլլայ առողջութիւնդ իմանալ» :

(\*)Տես «Անահիտ» , Բ . Տարի , թիւ 9—10—11

լով . հիմա , մնա՛ս բարով . քա՛ջ եղեր . տիրու-  
հոս ինձի կը սպասէ քու վրայօքդ լուր մը  
առնելու համար »

Եւ այս ըսելով թաղուհւոյն քով դարձաւ  
ու պատմեց :

Վարդը ի գութ շարժեցաւ եւ ըսաւ . « Պէտք  
է ուրեմն որ երթամ զինքը տեսնեմ . վասնզի  
հիւանդներն այցելելը ամենէն առաքինի գոր-  
ծերէն մէկն է . օ՛ն , Ջեփի՛ւս , երթա՛նք , » ը-  
սելով . բանտին կողմը ուղղուեցան :

Ջեփիւոը , առաջ անցնելով , Սոխակին աւե-  
տին տուաւ եւ ըսաւ . « Զօրացի՛ր , ո՛վ աղ-  
նիւ սիրահար . ահա քու ամբնաչքնաղ տիրու-  
հիդ կուգայ քեզ տեսնելու » : Եւ մինչդեռ ան  
կը խօսէր , Վարդը երեւցաւ հրաշալի փառքով  
ու պայծառափայլ զեղեցկութեամբ , եւ իր ա-  
նուշ բուրուճը վանդակը լեցոց :

Սոխակը , գայն տեսնելով , զէմքին զեղեցկու-  
թենէն եւ անուշ բուրուճէն զմոյլած , անձա-  
տելի ուրախութեամբ լեցուեցաւ եւ նորէն հո-  
զի աննելով այնքան զօրացաւ որ եթէ հրա-  
ման տրուէր՝ վանդակը կտարելով անոր ոտքը  
կ'իջնար : Ուստի մեծ ուրախութենէն գօչեց  
բարձրաձայն . « Արդեօք արթո՞ւն եմ թէ երազ  
կը տեսնեմ . այս ի՛նչ երջանկութիւն է ինձի  
որ իմ տիրուհին կը զիջանի իր ծառային տե-  
սութեան դալ » :

Վարդը պատասխանեց . « Ուրախացի՛ր , ո՛վ  
աղնիւ սիրահար . արդարեւ իմ սիրոյս համար  
չատ վիշտ ու տառապանք կրեցիր . հիմա ա-  
տենն է որ քու համբերութեանդ վարձքը ըն-  
դունիս : Հիմա հօրս պիտի երթամ եւ աղաչեմ  
որ քեզ ինձի շնորհէ . վայրկեան մըն ալ համ-  
բերէ՛ , որպէս զի բանտէն ազատելով ինձի հետ  
ուրախութեան խնջոյքը բազմիս » :

Այս ըսելով գնաց հօրը եւ ըսաւ . « Յիշէ՛ ,  
ո՛վ հայրս , թէ այն անմեղ ու հարազատ սի-  
րահար Սոխակը , նախանձոտ Փուշին քսու-  
թեանը պատճառով , բանտի մէջ պահել հրա-  
մայեցիր , մինչեւ որ դատաստանը տեսնելով  
հատուցում ընէիր . բայց բաղձատեսակ պատա-  
հարներու պատճառով , խեղճը մինչեւ այսօր  
բանտը մնաց : Հիմա որ փառքով ու զօրութեամբ  
նորէն աթոռս բազմեցայ , քեանէ կը խնդրեմ որ  
անոր ու Փուշին դատը տեսնելով երկուքին  
ալ հատուցում ընես իրենց արժանիքին հա-  
մեմատ . վասն զի կ'ուզեմ որ ինձի հաւատարիմ  
կողմերը իմ զտնուած տեղս ինձի հետ ըլլան  
եւ իմ խրախճանքներս ու փառաւորութենս  
տեսնեն ու վայելեն » :

Թագաւորը պատասխանեց , « Սիրելի՛ս , ես  
այն ատենը արդէն հասկցայ Փուշին նա-  
խանձոտ չարութիւնը եւ Սոխակին անմեղու-  
թիւնը . բայց գատելու ժամանակ չմնաց : Հի-  
մա քեզ կը կարգեմ ընդհանրական դատաւոր ,  
դո՛ւն վճռէ անոնց վարձքն ու պատիժը » :

Եւ իր որսորդներուն հրամայեց որ Սոխակը  
բանտէն հանեն ու իր հակառակորդին հետ  
Վարդին առջեւ բերեն :

Վարդը , իր սպարապետներն ու զործակալ-  
ները գումարելով ու հրապարակին վրայ առ-  
եան կանգնելով , անոնց զործերը քննութեան  
ենթարկեց , ուր Սոխակը արդար ելաւ ու  
վարձատրութեան արժանի , եւ Փուշը դատա-  
պարտուեցաւ բորբոքեալ հնոցի մէջ այրելու :

Այն ատեն Վարդը Սոխակին ըսաւ . « Օ՛ն ,  
աղնիւ ու հաւատարիմ սիրահար , մտի՛ր ան-  
կը հրճուանքներուն ուրախութեանը մէջ , իմ  
տեսութիւնս ու իմ խնջոյքս վայելելու » :

Եւ իսկոյն անոր փառաւոր պատմուճան հազ-  
ցնելով՝ թագաւորական ծագումին արժանի,  
եւ լուսափայլ պատուական ակունքով դար-  
դարուն սրբայական պսակ մը զլուսը դնե-  
լով իր սիրոյ նրբիչը ըրաւ զայն եւ թագա-  
ւորութեանը աթոռակից , փասքն եւ ուրա-  
խութիւնը բովանդակ անվախճան կեանքին  
մէջ վայելելու համար . եւ բոլոր փառքը՝  
յուրտեսանս , ամէն :

ՀԱՄԱՌՈՏ ԶԵԿՆԻՑՈՒՄ  
ՆՐԱՄՆԵ ԸՆԹԵՑՈՂԻՆ

Բոլոր գիտուններուն կարծիքը այն է թէ ա-  
մէն գրուածք , ամէն աստութիւն երկու իմաստ  
ունի , այսինքն վիպական մեկնութիւն մը եւ  
բարոյական մեկնութիւն մը , որ վիպականին  
մէջ ուրիշ բան ըսել կ'ուզէ , բարոյականին  
մէջ ուրիշ , ինչպէս կը տեսնենք հեղինակնե-  
րու աստուածաբանական եւ փիլիսոփայական  
աւանդութիւններուն մէջ :

Վիպականը գրուած բանին առերեւոյթ ի-  
մաստն է որ բառերուն զօրութենէն կ'ելլէ .  
իսկ բարոյականը ուղեւճուճն է ըսուած բա-  
նին՝ որ մտքին զօրութենէն կը բղխի : Առե-  
րեւոյթ իմաստը գրուածքին կարծես կեղեւն  
է , որուն մէջ կը պարփակուի ծուծը . եթէ

մարդ բարոյական խմաստովը մինչև ուղեղը  
չթափանցէ, ոչ մէկ շահ եւ օգուտ չի ստանար :

Այս պատճառով , ամէն մարդ որ գրութիւն  
մը կը կարդայ , պէտք է որ կեղեւէն մինչև  
ծուծը թափանցէ , որպէսզի խմաստին ուղեղը  
հասնի , ուր կը գտնէ երեք տեսակ ճաշակ ,  
այսինքն հաւատարան , յուսարան եւ սիրա-  
բան մտնութիւն , որով եւ ընթերցումը իրեն  
համար արդիւնաւոր կ'ըլլայ :

Արդ , այս համառօտ գրութիւնը՝ վիպական  
խմաստին նայելով՝ տեսակ մը գրօսարանի  
ձեւ ունի սղոց համար յօրինուած , վարդ ծա-  
ղիկին ու սոխակին վրայ , այսինքն այն թըռ-  
չուին զոր սովորաբար բանաստեղծներն ի-  
րենց ստակաւոր երգերուն մէջ վարդին սիրա-  
հարը կը համարին , որովհետեւ պարնան եղա-  
նակին , երբ վարդը կը բողբոջի ու կը փթթի ,  
այս թռչունն ալ՝ բնութենէն ազդուած՝ քաղց-  
րանուագ եղանակներով կը ճոխանայ , ու երբ  
անցնի պարունն ու վարդին ճոխութեան ժա-  
մանակը եւ երբ ամառը գայ , երգելէ կը դադրի :

Հետեւաբար , մինք ալ մեր վէպն սկսանք  
գարնան եղանակէն , երբ բոլոր տունկերն ու  
բոյսերը կը բողբոջին եւ երկրիս երեսը կը  
դարգարուի . ինչպէս վայելուչ բուրաստան մը՝  
տարբէրն ձեռքովը տնկուած՝ դոյնդոյն բազ-  
մատեսակ երկնեւրանք ծաղիկներով , որոնք՝ ա-  
մէն մէկուն յարմարութեան համեմատ՝ ծա-  
ղիկներու թագուհիին , այսինքն վարդին , գոր-  
ծակալ , պաշտօնեայ , զինուոր կամ զօրապետ  
անուանեցինք , եւ քաղցրանչին զեփուս հօ-  
վը սուրհանդակի նմանցուցինք , եւ ուրիշներն  
ալ՝ ըստ պատշաճի , ինչպէս կը տեսնուի . եւ  
յետոյ շարունակելով տարուան միւս եղանակ-  
ներն ալ բոլորեցինք մինչև մէկալ գարունը ,  
բացատրելով իւրաքանչիւր եղանակի ազդե-  
ցութիւնն ու ներգործութիւնը՝ մեր տկար  
հմտութեան կարողութեանը չափ :

Իսկ բարոյական խմաստը , ամէն մարդ կրնայ  
անոր ուրոյն մեկնութիւն մը տալ իրեն հա-  
մար : Այս գրութեան մէջ մեր իսկական դի-  
տումը հետեւեալն է . այսինքն նախ վարդը  
կը նշանակէ հոգին ու կեանքը , վարդարանը՝  
մարմնոյն քաղաքն է , եւ սոխակը՝ անձնական  
գոյութիւնը , յղացման ու ծննդեան օրէն  
մինչև մահ . համեմատեցինք գարնանամուտը  
ժամանակին հետ , գարունը՝ բողբոջական ման-  
կութեան , ամառը՝ ջերմ երիտասարդութեան ,  
աշունը՝ հասուն ու դաղ տարիքին եւ ձմե-  
ռը՝ պողած ձերութեան ու վարքութեանը փո-

փոխման , նաեւ զանազան յաջողութեանց եւ  
ձախողութեանց , զեփուսը՝ իմացականու-  
թեան եւ փուշը՝ հիւանդութեան ու փորձանք-  
ներու եւ վերջապէս մահուան :

Կարելի է նաեւ մեկնութիւն մը գտնել հա-  
ւատքի , յոյսի եւ սիրոյ մէջ բաղդատելով նախ  
գարնանամուտը՝ օրերու սկզբին ու սկզբնա-  
ւորողին , գարունը՝ բանին արարչութեան ,  
վարդը՝ մարմնացեալ բանին՝ Քրիստոսին , վար-  
դարանը՝ Ս. Եկեղեցին , անոր գրան առջուէն  
անցնող գեաը՝ մկրտութեան սրբազան խոր-  
հուրդին , Ջեփուսը՝ Ս. Աւետարանին եւ ամե-  
նասուրբ Հոգւոյն շնորհաբեր ազդեցութեանը ,  
սոխակը՝ Քրիստոսը ջերմեանդ հաւատքով սի-  
րողին , որ անոր աստուածութիւնը խոստովա-  
նելով փառաբանութիւնը կ'երգէ անոր , փու-  
շը՝ Յորի բանասրկուին եւ չարամիտ անհա-  
ւատներուն , իսկ ծաղիկներն եւ ուրիշ իրերը՝  
իւրաքանչիւրին յարմարութեանը համեմատ՝  
առաքինութեան ու մտնութեան գործերու :

Միանգամայն տարուան եղանակները մէկ  
մէկ բան կը նշանակեն , պարնանամուտը՝ հա-  
ւատք ու խոհեմութիւն , գարունը՝ յոյս եւ  
ժուժկայութիւն , բարեգործութեամբ հան-  
դերձ , նաեւ փափկութեամբ ու վայելչու-  
թեամբ , ամառը՝ սէր եւ արիութիւն , նաեւ  
բարկութիւն եւ նախանձ՝ վաւայ բարքերով  
մէկտեղ ու երբեմն զղջանքով , աշունը՝ արդա-  
րութիւն եւ խաղաղութիւն , բայց նաեւ ազա-  
հութիւն , խարդախութիւն ու խաբեքայու-  
թիւն՝ գաղջ ծուլութիւնով մէկտեղ , նաեւ հե-  
րետիկոսական ազանդներն ու Ս. Եկեղեցիին  
դէմ յարուցուած հալածանքները . իսկ սոխա-  
կին բանասրկութիւնը՝ մահը կը պատկերէ ,  
եւ գարնանամուտին ու գարնան վերադարձը՝  
Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակը ,  
սոխակին բանտէ ազատիլը՝ մեռելներու յա-  
րութիւնը , միանգամայն վերջին դատաստանը ,  
գործերու հատուցումը , չարերուն պատիժ եւ  
բարիներուն երջանկութիւն եւ յաւիտենական  
փառք :

Եւ դեռ ուրիշ այսպիսի շատ մը նրբիմաց  
մեկնութիւններ այս գրութեան մէջ կրնայ հանել  
հետազօտող ընթերցողը իր մտքին ընդունա-  
կութեանը համեմատ , որովհետեւ գրեթէ չկայ  
խօսք մը կամ բառ մը որ առանց նշանակու-  
թեան դրած ըլլած ասոր մէջ՝ սկիզբէն մինչև  
վերջը , մանաւանդ սոխակին երկու խօսակցու-  
թիւններուն ու նամակին մէջ , եւ այլն :

Արդ, եթէ ընթերցողը ախորժի եւ համ առնէ  
ասկից, կը խնդրեմ որ «հայր մեր»ով մը յիշէ  
ղիս ու ծնողքս ու բոլոր իմ ազգականներս :

Մնա՛մ ամենախոնարհ ստրուկ ծառայ

ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐ ԽՕՃԵՆՅ ԵՐԵՒԱՆՑԻ



### ԳՈՐԾԻ ՄԱՐԴԻԿ

ՊՈՒՍԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Բ .

Շար . (\*)

—o—

—Պատրա՞ստ ես , երթա՛նք :

Արսէն կուլեանի ձայնն էր որ կը հնչէր  
սանդուխին գլխէն՝ Մարտիրոս աղային ուղ-  
ղուած :

Կերմերեան Մարկոս էֆէնտիին պիտի եր-  
թային միասին :

Մարտիրոս աղա անմիջապէս վար իջաւ :  
Սեւ բռտէնկոթ հագած էր ու ճերմակ փողկապ  
դրած : Կուլեան ըսած էր իրեն որ շաքաթ գի-  
շերը Մարկոս էֆէնտի ընդունելութեան  
գիշերն էր եւ հետեւաբար Բերայի բոլոր հայ-  
կական բարձր դասը հոն դումարուած պիտի  
ըլլար : Այս պատճառաւ Մարտիրոս աղա գրե-  
թէ ժամ մը զոհեր էր իր արդուզարդին : Այս  
այցելութիւնը թէեւ անհունապէս կը գգուէր  
իւր անձնասիրութիւնը, այսու հանդերձ կը յու-  
զէր ու կը շուարեցնէր զինքը : Պոլիս հաստա-  
սուելէն ի վեր գետ անիթ չէր ունեցած մտեր-  
մական յարաբերութիւններ հաստատելու հայ  
վաճառական ազնուաշուքներու հետ, եւ առա-  
ջին չփումը , զոր նոյն իրիկունը պիտի ունե-  
նար, տեսակ մը երկիւզով կը լեցընէր զինքը :  
Կը վախնար որ իր գաւտապիլի կոշտութիւնը  
չափազանց աչքի վարնող հակապատկեր մը  
չձեւացնէր նրբացած , եւրոպականացած, Ման-  
չէսթըր տեսած այդ ազնուական վաճառական-  
ներուն քով : Վրան խնդացնելը այնչափ հոգը  
չէր, որչափ ատկէ առաջ գալիք նիւթական  
վնասը . որովհետեւ եթէ այդ առեւտրական հը-

րապարակի մարդիկը գէշ գաղափար կազմէին  
իւր վրայ , կրնար վնասաբեր ըլլալ իր դոր-  
ծառնութիւններուն :

Երբ Արսէն կուլեանի հովանաւորութեամբ  
երեւցաւ Մարկոս էֆէնտի ընդունելութեան  
սրահի սեմին վրայ, հիւրերուն մեծագոյն մասը  
եկած էր արդէն : Հոն ժողվուած էին հայ ազ-  
նուակահութեան ամենէն փայլուն ներկայա-  
ցուցիչները, որոնց անունը եթէ ոչ Կոթայի՝  
գոնէ Ս. Փրկչի օրացոյցին մէջ տարիներէ ի վեր  
կը փայլէր :

Մարտիրոս աղա սատամեակ կանգ առաւ  
դրան առջեւ : Ինչպէ՞ս պիտի բարեւէր , ինչ-  
պէ՞ս պիտի բարեւէին զինքը , պիտի հասկնա՞ր  
անոնց խօսած հայերէնը , պիտի կրնա՞ր նրբա-  
ձեւուած մեծարանքներն եւ ողջոյնները փոխա-  
նակելառանց մեղանշելու, առանց անճարակու-  
թիւն մը ընելու եւ ամենուն ծիծաղը իր վրայ  
հրաւիրելու . . .

—Մտի՛ր, աղբար, փսփսայ քովէն կուլեան որ  
քիթը խնջելու համարպահ մը նախասննեակին  
մէջ դադար առնելէ ետքը եկեր միացեր էր ի-  
րեն :

Այս մղիչ խօսքին աղդեցութեամբ գաւառա-  
ցին չորս քայլ դէպ ի առաջ գացած էր եւ հա-  
ւանօրէն իր յառաջխաղացութիւնը պիտի շա-  
րունակէր եթէ անանցանելի արգելքի մը առ-  
ջեւ, որ էր ընկուզներէ կտոր սեղան՝ մը, կենալու  
չստիպուէր :

Հիւրերը աներես ուշադրութեամբ կը դիտե-  
ին նորեկը որուն գալուստը արդէն ծանուցած  
էր Մարկոս էֆէնտիին : Կուլեան, Մարտիրոս ա-  
ղային ետեւէն , ներկաներուն աչքի ուշիմ  
քիթումներ կ'ուղղէր որոնք կրնային սա-  
կերպ թարգմանուիլ . «Ահա ասիկայն վար-  
պետորդի մարդը որ իր մայրը իբրեւ սպա-  
սուհին ձրիաբար թաղել տուաւ :» Մարկոս է-  
ֆէնտի այդ միմոսական ներկայացումին վրայ  
աւելցուց իր բարձրաձայն ներկայացումը .

—Իչտէ մեր Մարտիրոս աղան է . . . Սարը-  
պըյըքեան . . . Իչտէ սա է :

Այս ազնուաշուքական ներկայացումը թէեւ  
քիչ մը անակնկալ եւ տարօրինակ երեւցաւ  
Մարտիրոս աղային, բայց զժգոհ չմնաց : Ընդ-  
հակառակն քաջալերուեցաւ այդ դոհնիկ ու  
ամարդի պատուասիրութենէն ու զլիսով բա-  
րեւ տալէ ետքը ներկաներուն , տան տիրոջ  
դարձաւ եւ ըսաւ , վստահ , գրեթէ տիրական  
ձայնով մը .

(\*) Տես «Անահիտ», Բ. տարի, թիւ 9—10—11

— Իմ անունս տուիր , աղէկ ամա , սա է֊  
ֆէնտիններուն ո՛վ ըլլալը չըսիր ինծի :

— Մարկոս էֆէնտի , քա մեր անունն ալ  
չըսե՞ս . . մարդը հախ ունի , ատանկ ներկա֊  
յացում կ'ըլլայ , գոչեց դէպի քառասունընէնգ  
մազլցող օրիորդ մը որուն իրականութեան  
ակներեւ ապացոյցը իր շրջագրեստն էր միայն :

— Մէյ մը մարդուն տեղ մը ցուցուցէ՛ք ,  
նստի , ներկայացում մերկայացում ետքէն  
կ'ընէք , դիտել տուաւ ուրիշ մը :

— Նստէ՛ , Մարտիրոս աղա , սանկ նստէ :

Մարտիրոս աղա նստաւ : Իր վարանումները  
բոլորովին փարատած էին եւ ա՛լ վախ չունէր  
իր դաւառացիի անտաշուութենէն : Խօսակցու֊  
թիւնը սկսաւ , ու քանի չարունակուեցաւ , Մար֊  
տիրոս աղա հետզհետէ իր աչքին առջեւ սկսաւ  
մեծնալ : Հիմա կը տեսնար որ այդ «ազնուա֊  
կան»ները , այդ «ազնուաշուք»ները , այդ  
բարձր դաս»ի մարդիկը իրենց լեզուով , վարք֊  
ու բարքով , ձեւերով ու խօսակցութեամբ  
չատ աւելի վար էին իրմէ :

Այս առաջին երեկոյթէն ետքը Մարտիրոս  
աղան մշտական այցելուն եղաւ Կերմերեա֊  
նենց ու անոնց միջոցաւ հետզհետէ իր ծանօթ֊  
ներուն սահմանը ընդարձակեց մինչեւ Օրթա֊  
քէօյ : Հաղիւ երկու ամիս անցած ա՛լ գրեթէ  
ամէն տուն կը մտնար ու ամէն տեղ թեւա֊  
բաց կ'ընդունուէր : Երկու ամսուան շփումը  
այդ վաճառականներուն հետ բաւական եղեր  
էր զինքը անոնց սասիճանին կատարելապէս  
հաւասարցնելու եւ աղնուաշուքեան դասախ֊  
արակութեան մասին իր ունեցած պակասները  
լրացնելու . մանաւանդ որ կենցաղաբարտու֊  
թեան ու բարեկրթութեան անյաղթելի զտու֊  
վեր մը մազլցելու պէտք չէր ունեցած ասոր  
համար , այլ ընդհակառակն դիւրին գլորակում  
դէպ ի ապերասան ու անկիրթ վարմունքներու  
ընթացքով եւ ձեւերով մէջ : Հիմակ գաւառացիի մա֊  
քուր հայերէնին տեղ տաճկախառն գոնիկ  
բացատրութիւններով պաճուճեալ լեզու մը  
կը խօսէր . իր գոնուած նոր միջավայրին սո֊  
վորական եզող հայհոյանքներն ու յիշոցները  
պարտուպատշաճ տեղին դորձածելու մասին  
ցոյց կուտար զարմանալի տաղանդ մը որ կը  
մատնէր իր մէջ ծածկուած յորովայնէ ընտրեալ  
բարձր դասի աղնուաշուքը . բոքերի մէջ գրեթէ  
երկիւղալի համեմատութիւններ առեր էր  
իր ճարպիկութիւնը , եւ կոշտ ու լզրճուկ կա֊  
փակներու մէջ կը մրցէր արդէն Օրթաքէօյի

աղնուականներէն Յովնան պէյի հետ որուն  
հաւասարող դժուար էր գտնել :

— Քա բէք շիրին մարդ է , կ'ըսէր օրիորդ Հո֊  
ռոփիկ , ամէն անգամ որ Մարտիրոս աղայի  
խօսքը բացուէր , իլլէ քիչ մը խըզմիշ ըլլայ  
տէ լեզուն աւրէ նէ՛ , չլսուած քիւֆիւրներ  
կ'ընէ կոր . . . է՛յ ալ ամենքս ա՛լ կը ճաթինք  
կոր :

Օրիորդ Հոռոփիկը հայհոյանքներով «ճաթե֊  
ցնել» , ինք որ քառասունընէնգ տարիէ ի վեր  
ամէն տեսակները լսեր , գործածեր ու ա՛լ յափ֊  
բացած՝ հրասթափ եղեր էր , անվիճելի կերպով  
ցոյց կուտար Մարտիրոս աղային գերազան֊  
ցութիւնը :

Բերայի աշխարհիկ բարձր կեանքին մէջ  
գտած այս յաջողութիւնները , առանց գինովցը֊  
նելու Մարտիրոս աղան , գաղափարներուն մէջ  
յեղաշրջում մը յառաջ բերին : Ինք որ պոլսե֊  
ցի ազգական հետ ամուսնանալու խորհուրդէն  
կը սարսափէր , սկսաւ շատ բնական , նոյն իսկ  
իրեն համար միակ հնարաւորը նկատել այդ  
տեսակ ամուսնութիւն մը : Իր այրիութեան  
պարագան շատերը չէին գիտեր եւ ընդհանրա֊  
պէս գինքը ամուրի կը կարծէին : Շատ ծնողներ  
արդէն յոյսեր կը տածէին Մարտիրոս աղան  
իրենց փեսայ ունենալու , եւ աղջիկներն ալ  
այդ պատահականութեան կը նայէին՝ գաւառա֊  
ցիին նկատմամբ խիստ նպաստաւոր հայ֊  
եացքով : Ամէն պայամ տեղերը Սարըպըլքեան  
միեւնոյն խօսքն էր որ կը լսէր մայրերուն  
բերնէն .

— Ինք կարգենք , Մարտիրոս աղա , տուն տեղ  
ըլլաս , քիչ մըն ալ մենք քեզի գանք ուտենք  
խմենք :

— Հապա , հապա , ասանկ բան կ'ըլլա՞յ , միշտ  
մերին անուշները , պիտքիւնները , կ'ուտես ,  
խանութնիս , չայերնիս , իքսիրնիս կը խմես ,  
դուն տուն չունիս քի մենք ալ քեզի գանք . . .  
Արսէն կուլեանը դարձար գլխերնուս :

— Զաթը էրիկ մարդ ըսածդ կարգուելու է .  
եա չէ նէ՛ , գիտես քի հիշ համ հոտ չունի . . .  
ասկէ դատ , աղւոր կնիկ մը թեւդ առած տեղ մը  
երթաս նէ՛ , քեզ ուրիշ կերպ կ'ընդունին :

Մարտիրոս աղա հաւանութեան խօսքերով  
մտիկ կ'ընէր այս կատակախառն մատուցում֊  
ներուն . միայն ատեն ատեն կեղծ համեստու֊  
թեամբ ու վեհերոտութեամբ դիտել կուտար .

— Աղէկ , բայց ես կոշտ գաւառացի մըն եմ ,  
պոլսեցի փափուկ աղջիկ մը ինծի հետ կրնա՞յ  
ապրիլ :

Մայրերու լէզվոնը կը պատասխանէր .

—Մարտիրոս աղա, առ ի՞նչ խօսք է, ինչո՞ւ կոչաւ ըլլաւ . գաւառացիին ի՞նչ է, պոլսեցիին ի՞նչ . . . հէմ մի՛ կարծես քի պոլսեցի աղջիկներն ալ անանկ փափուկ կ'ըլլան : Մենք քեզի թօրութը հասա աղջիկ մը գտնանք տէ՛նայէ :

Մայրերու փութկոտութիւնն ու հաճոյակատարութիւնը հոս կանգ չէր առներ : Գիտնալով որ գաւառացիին միակ ու յետին առարկութիւնն պոլսեցի աղջիկներու փափկակազմութիւնն էր, այդ արմատացած գաղափարը բռնալու կը ջանային միաձայնութեամբ : Եւ որպէս զի իրենց պաշտպանողականը ընդհանուր խօսքերու տարտամութեան մէջ իր զօրութիւնը չկորսնցնէր, խօսքերնին կը մասնանաւորէին, օրինակներով, յատուկ անուններով կը հաստատէին իրենց ապացոյցները :

—Մարտիրոս աղա, ինչո՞ւ ատանկ կ'ըսես, կերմերեաննց աղջիկը աչքիդ առջեւ բեր, ծծեր մը ունի քի, Եաֆայի փորթուգալ կընրմանի :

—Քա հապա Տիրանեաննց Ջարուկը, պալտըր մը ունի քի՛ նա՛ . . . վրայէն հիչ չես ըսեր : Անցած օր բաղնիքը տեսայ՝ զարմացայ :

Ու բացակայներէն կ'անցնէին ներկայներուն, ամէն մայր իր աղջկան առաւելութիւնները, հրապոյրը, դիմացկունութիւնը մէջտեղ կը դնէր : Միժերու, թեւերու, սրունքներու, երանքներու, կուրծքերու, մէջքերու եւ իրաններու երեւակայական ցուցահանդէս մը յայրատ հաճոյք մը կը պատճառէր Սարըպըրբեանին :

Բոլոր այս անդուլ անդադար թելադրանքներն իր յետին վարա՛ ումները ցրուեցին եւ ա՛լ որոշեց ամուսնանալ : Իր ընտրութիւնը ըրած էր արդէն այն օրէն ի վեր ուր պոլսեցի աղջկայ մը հետ ամուսնանալու գաղափարին սկսած էր ժպտիլ :

Իր ընտրելին էր Սաթենիկ կերմերեանը, որուն մեծկակ օժիտը, գործնական ոգին, լրջութիւնը եւ ֆիզիքական կազմութիւնը գնահատած էր առջի վայրկեանէն իսկ : Միայն թէ, հակառակ Մարկոս էֆէնտի սան մէջ դրած սիրալիբ ընդունելութեան, ո եւ է ուղղակի կամ անուղղակի առաջարկ մը չէր եղած զինքը փեսացնելու մասին :

Բաւական ատեն այդ տեսակ գիմումի մը ի դուր սպասելէ ետքը խորհեցաւ առաջին քայլը

ինք առնել : Խնդիրը բաւական փափուկ էր, կրնար մերժումի մը հանդիպիլ եւ առով խանգարել Մարկոս էֆէնտի հետ մշակած յարաբերութիւնը որմէ առեւտրական օգուաներ քաղել կը յուսար : Այս պատճառաւ լաւագոյն համարեց գործը յանձնել երրորդի մը որ իր բեւ երկու կողմանց բարեկամ ներկայանար եւ իբր թէ ինքնաբերաբար՝ կերմերեաննց բերանը փնտռէր այդ տեսակ խնամութեան մը իրադրո՞ման մասին : Երկար ժամանակի պէտք չունեցաւ այդ պաշտօնը կատարելիք մարդը դտնելու համար : Լսած էր թէ Արսէն կուլեան իր շատ մը շիլ գործերուն հետ ամուսնութեան միջնորդի դերն ալ կը կատարէր : Ուղղակի գնաց զինքը գտաւ ու խօսքը բացաւ :

Արսէն կուլեանի պատասխանը եղաւ ինչ որ պէտք էր ըլլալ :

—Ես առ գործը կը յաջողցնեմ : Բայց ինծի ի՞նչ պիտի տաս :

Սակարկութիւնը ըրին, որուն համեմատ գործը յաջողած ատեն յիսուն ոսկի պիտի ստանար Արսէն էֆէնտի :

Շաբաթը չբողորած Մարտիրոս աղա ընդունեցաւ իր բարեկամին այցելութիւնը :

—Աչքդ լոյս, գործը կարգին է, եղաւ միջնորդին առաջին խօսքը :

Միայն թէ բերած պատասխանը վերջնական չէր : Ամուսնութեան սկզբունքը ընդունուած էր, սակայն Մարկոս էֆէնտի հարկ տեսած էր հաւանութիւնը տալէ առաջ որոշ տեղեկութիւններ ունենալ Սարըպըրբեանի նրբակամ վիճակին ու առեւտրական գործունէութեանը վրայ :

—Թող հարցընէ փնտռէ, պատասխանեց Մարտիրոս աղա իր միջնորդին վստահ կերպով, գործս մէջտեղն է եւ ծածկելիք բան մը չունիմ :

Եւ իրատամբ գաւառացիին գործն ու նրութեան վիճակը բարգաւաճելու ճամբու մէջ էին, այնպէս որ Մարկոս էֆէնտի ամէն կողմէ գոհացուցիչ տեղեկութիւններ միայն քաղեց :

Թէեւ ամէն ղգուշական միջոց ձեռք առած էին կերմերեանք իրենց աղջկան ամուսնութեան խնդիրը ծածուկ պահելու համար վերջնական որոշումէն առաջ, այսուհանդերձ իրենց ծանօթները կոհած էին ամէն բան եւ դեռ Մարկոս էֆէնտի իր քննութիւնները չաւարտած, ամբողջ Բերա իմացած էր կուլեանի նոր միջնորդութեան պաշտօնը :

Առտու մը կանուխ երբ Ս. Երրորդութեան աւագերէցը, Տ. Մկրտիչ Յովհաննէսեան, բանկալը մտաւ, լուրը մինչեւ ժամկոչին ու բարապանին ախանջը հասած էր:

— Մարկոս էֆէնտիի աղջիկն ալ կը կարգուի կոր Սարըպըլըքեանի հետ, ըսաւ բարապանը խօսքը աւագերէցին ուղղելով:

— Ի՞նչ կ'ըսես, գոչեց Տ. Մկրտիչ զարմացած:

Տէր Մկրտիչ Յովհաննէսեան Մարկոս աղայի տաներէցն էր. երկու շաբաթ առաջ Ռոտտթօ՞ իր ծննդավայրէ՞ գացած էր եւ առջի իրիկունը վերադարձած էր Պոլիս, հետեւաբար դեռ ժամանակ չէր ունեցած տեղեկանալու օրուան լուրերուն:

Այս լուրը անհաճոյ անակնկալ մը եղաւ իրեն համար. միշտ ենթադրած էր որ Սաթենիկի ամուսնութիւնը իր ձեռքով պիտի կատարուի ու ինք պիտի ստանայ միջնորդչէքը, եւ ահա որսը փախած էր ձեռքէն:


— Եղաւ լմնցա՞ւ, նշանը տուի՞ն, հարցուց ձայնով մը զոր կը ջանար անտարբեր ցոյց տալ:

— Լմնցածի պէս բան մըն է... գործը եփողն ալ կուրխանն է:

— Կուրխա՞ն... Ասիկա լախտի մը պէս իջաւ Տ. Մկրտիչի գլխուն:

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

(Շարունակելի)



ՊԱՏՃԱՌԻՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՍՅԱԿԱՆԻ ՄԷՉ

— 00 —

Պատճառորականութեան մասին մեր առաջին յօդուածին մէջ (') ապացուցինք թէ մտաւորական, բարոյական, մէկ խօսքով՝ հոգեբանական բոլոր երեւոյթները կը հպատակին այն տիեզերական օրէնքներուն որոնք կ'իշխեն ուրիշ ծանօթ ամէն կարգի երեւոյթներու: Գիտենք թէ չկայ ո եւ է հոգեբանական իրողութիւն մը որ չունենայ իր առաւել կամ նուազ բացայայտ պատճառը եւ որ մատնուած ըլլայ կամայական ուժի մը անկախ քմահաճոյքին: Այս յօդուածին մէջ պիտի քննենք թէ ինչ հետեւանքներ ունի այդ վարդապետութիւնը բարոյականի սահմաններուն մէջ:

Շատ իմաստասէրներ, պաշտպան ազատակամութեան, չկարենալով հերքել պատճառորա-

կանութեան գիտական ամուր հիմերու վրան հաստատուած փաստերը, ուղած են զայն դնաթափել (déprécier) ամենամեծ թերութիւններ գտնելով անոր կիրարկութիւններուն մէջ:

Նախ եւ առաջ պէտք է ըսել թէ գիտական ճշմարտութիւն մը կարելի չէ իր արդիւնքներէն դատել. կարելի չէ դատապարտել կամ անընդունելի նկատել զայն՝ անոր վնասարեւ կամ իրրեւ այն համարուած հետեւանքներուն վրայ հիմնուելով միայն: Ի՞նչ կ'ըսէր բնագէտ մը, եթէ չուզէինք ընդունիլ կլեքտրականութեան զոյութիւնը, որովհետեւ կայծակը՝ որ անոր շօշափելի մէկ արդիւնքն է, մեծ ազեպքներ յառաջ կը բերէ. մեզ պարզապէս տղէտ կամ յիմար պիտի նկատէր: Արդարեւ, մեր կամքը, մեր գնահատութիւնը ոչ մէկ կերպով չի կրնար ազդել ընկան կամ բարոյական աշխարհի ճշմարտութիւններուն վրայ եւ զանոնք բարեփոխել: Այդ արդիւնքներու օգտակարութիւնը կամ վնասակարութիւնը յարաբերական բաներ են, մարդկային անձուկ շահներուն տեսակէտով միայն նշանակութիւն ունին: Գիտութիւնը անհունապէս գերիվեր է այդ գեանաբարչ նկատողութիւններէն, եւ զայն կարելի է ներկայացնել անողոք, անմատչելի եւ անկարեկիր մօր մը պատկերով, մայր մը որ նոյն սիրով կը սիրէ, նոյն գորովով, նոյն խանդաղատանքով կը շրջապատէ իր արգանդին բոլոր պտուղները անխտրաբար, ինչ որ ալ ըլլայ իր ոտքին առջեւ սողացող մարդկութեան գնահատութիւնը անոնց իւրաքանչիւրին նկատմամբ: Սակայն այսու հանդերձ, մեր այս յօդուածով ցոյց պիտի տանք թէ այդ վնասաբեր արդիւնքները, պանոնք յղայող հեղինակներու մաքին մէջ միայն գոյութիւն ունեցած են, թէ ընդհակառակն այդ մեծ ճշմարտութեան, այդ փրկաւէտ վարդապետութեան արդիւնքը ուրիշ բան չէ բայց եթէ ամենամեծ բարիքներ՝ բարոյականի տեսակետով:

Մի առ մի յիշատակենք պատճառորակահոութեան հակառակորդներուն առարկութիւնները, վերլուծենք զանոնք եւ անոնց ունայնութիւնը իսկոյն երեւան պիտի դայ:

Նախ եւ առաջ, ի՞նչ պէտք է ըմբռնել «բարոյական» բառով: Թերեւս այս հարցումը բոլորովին տղայական պիտի թուի մեր ընթերցողներուն, սակայն եւ այնպէս հարկաւոր է որ անոր նշանակութեանը մասին բացարձակապէս համամիտ ըլլան մեզի, որպէս զի կարենանք աղէկ հասկնալ զիրար: Այս ճշդումը հարկաւոր է մանաւանդ որովհետեւ մեր հակառակորդները մեզմէ բոլորովին տարբեր կերպով կ'ըմբռնեն բարոյականը:

(\*) Տես «Անահիտ», Ա. տարի, թիւ 8, 9—10

Անոնց կարծիքով բարոյականը մարդկային  
 այն դերագոյն ստորագելիքներէն մին է որ  
 մարդը կը զանազանէ կենդանիներէն : Բարիին  
 ու չարին դիտակցութիւնն է անոր Սրբիչը  
 դրամ է մեր հոգիին մէջ , անյեղլի օրէնքներու  
 վրայ հաստատելով զայն : Նոյնն է ան ամէն  
 մարդու համար , ինչ որ ալ ըլլայ զեղը որուն  
 կը պատկանի , պատմական կամ նախապատմա-  
 կան՝ ժամանակը ուր կ'ապրի կամ ապրած է ,  
 երկիրը որ անոր օրօրանն է կզամ :

Միեւնոյն դերագոյն ձեռքն է որ անջնջելի  
 տատերով քանդակած է զայն անմահ օրինազրքի  
 մը մէջ ի պէտս համակ մարդկութեան : Դալով  
 այն խնդրոյն թէ բարի՞ կամ չար կը ծնի մարդ,  
 անա թէ ի՞նչ է մեր հակառակորդներուն կար-  
 ծիքը : Ոմանք աստուածային անհուն բարու-  
 թեան վրայ հիմնուելով , կ'ընդունին թէ մեր  
 հոգիին մէջ ունինք բարիին սկզբունքը , իսկ  
 չարին աղբիւրը գոյութիւնն չունի մեր մէջը ,  
 թէ Չարը ուրիշ բան չէ բայց եթէ մարդկային  
 անկարողութիւնը հասնելու աստուածային  
 անհուն կարողութեան որ մեր մտաւորպարն է ,  
 եւ զայն իրազործելու : Տիկին Կիլօն է որ  
 այս ըմբռնումը յղացած եւ զայն երկարօրէն  
 պարզած է իր «Դաստիարակութեան վրայ»  
 ամենազոզար գրքոյկին մէջ , գրքոյկ որուն  
 այս տեսութեանը համախոհ չենք բայց զոր  
 կ'ուզէինք ամէն կին կարգար մայր գառնալէ  
 առաջ , գրքոյկ մը ուր հեղինակը , կին եւ մայր  
 միանգամայն , օժտուած սրաթափանց մտքով  
 եւ հոգեկան ու մտաւորական ամենարարժք  
 յատկութիւններով , իրենց պիտի մատակարար-  
 քէր ոչ թէ հոգեբանական կամ մանկավարժական  
 չոր , վարդապետական «թէորի»ներ , այլ մայրա-  
 կան ամենախորին եւ անկեղծ յուզումներով ,  
 զարմանալիներքնատեսութեամբ , ամենաձգրիտ  
 գիտողութիւններով համեմուած , ամենէն հո-  
 սուն , ամենէն գողտր , ամենէն ճկուն սծով գրուած  
 ընտանեկան նամակներու անասելի հրապոյրը :

Ուրիշներ՝ որոնք մեծաճանութիւնը կը  
 կազմեն մեր հակառակորդներուն մէջ , կ'ըն-  
 դունին թէ մարդս ոչ չար կը ծնի ոչ բարի ,  
 թէ երբ չափաւաս կը դառնայ , իր առջեւ կը  
 գտնէ ամէն առիթի մէջ երկու ճամբաներ ,  
 որոնցմէ մէկը դէպ ի Բարին կ'առաջնորդէ  
 զայն եւ միւսը դէպ ի Չարը , եւ ան ազատ է  
 միշտ ըստ կամս այդ երկու ճամբաներէն մէկը  
 կամ միւսը ընտրելու :

Ի՞նչպէս կ'ըմբռնենք մենք՝ պատճառորա-  
 կաններս , բարիին ու չարին զգացումը :

Մեր նախորդ յօդուածին մէջ ապացուցինք  
 թէ մեր մտաւորական եւ բարոյական կարողու-  
 թիւնները արդիւնք են երկար դարերու ընդ-  
 մէջէն նախանիւթին զգայնութեան յառաջ-

խաղաց զարգացմանը , ուստի եւ կենդանիներու  
 ընդ մէջ պէտք է փնտոել այդ բարոյա-  
 կանի աղբիւրը եւ անոր զարգացման , անոր  
 յամբ բարեշրջութեան յաջորդական աս-  
 տիճանները : Արդարեւ քանի որ գիտական հի-  
 մերու վրայ հիմնուելով կ'ընդունինք թէ  
 կենդանիները եւ մարդս հեռուհեռէ կը զար-  
 գանան , կը կերպարանափոխուին անընդհատ ,  
 թէ անոնց ապրելու եղանակները կը բարեփո-  
 խուին անդադար , թէ նորանոր պահանջներ ,  
 նորանոր սովորութիւններ կը ծնին , բնական  
 է որ պէտք է ընդունինք թէ բարոյականն ալ  
 որպէս զի կարենայ պատշաճիլ այդ յարափո-  
 փոխ մարդկութեան յաջորդական վիճակնե-  
 րուն , պէտք է որ զուգահեռաբար փոփոխու-  
 թիւններ կրէ , մէկ խօսքով բարոյականը կը  
 հպատակեալբարեշրջութեան տիեզերական օրէն-  
 քին , ուստի եւ չի կրնար անյեղլի անփոփո-  
 խելի բան մը ըլլալ : Մեր ամէն զգացումները ,  
 մեր բոլոր հոգեկան կիրքերը որոնք մեր բա-  
 րոյականը կազմող տարրերն են , իրենց աղ-  
 քիւրն ունին կենդանիներու քով , աւելի կամ  
 նուազ տարրական վիճակի մը մէջ : Երբ նախ-  
 նական մարդոց մէջ փոքր խմբումներ տեղի  
 ունեցած են , երբ այդպէսով մարդս ընկերու-  
 թեան հիմն է դրած , եւ իր նմաններու հետ յա-  
 բարեբուութեան մոնելով՝ պարտաւորուած է իր  
 զգացումները , իր կիրքերը չփման մէջ գնել  
 իր նմաններու նմանօրինակ զգացումներուն  
 եւ կիրքերուն հետ , եւ այդ ամենքը՝ մասնա-  
 ւորապէս անհատական շահէն մղուած՝ անկա-  
 բող եղած են երկար ատեն հաշտ ապրիլ ,  
 այն ժամանակն է որ այդ մարդկային սաղմ-  
 նաձեւ ընկերութեան կազմուածքին մէջէն  
 ամենէն հզօրը , ամենէն ճարպիկը , ամենէն խե-  
 լացին դերակազմութիւն տուած է իր խօսքին ,  
 իշխած է իր խմբակիցներուն վրայ , հաշտա-  
 բար դարձած է անոնց միջեւ ու իր վճիռները  
 եւ խորհուրդները օրէնքի կարգ են անցած  
 փոքր առ փոքր : Այդպէսով ծնած է օրէնսդրու-  
 թիւնը որ մարդկային արարքներուն տուած  
 է իրենց արտաքինական նշանակութիւնը , նը-  
 շանակութիւն որմէ զուրկ է ամէն արարք ,  
 երբ վերացեալ կերպով ի նկատի անենք  
 զայն :

Բանի մը օրինակներ շօշափելի պիտի դար-  
 ձընեն մեր այս ըսածը :

Անքաղաքակիրթ մարդը վայրագ է , վայրա-  
 դութիւնը ինքնին , վերացականապէս նկատու-  
 դութեան առնուելով , կարելի չէ չար համարիլ :  
 Բայց դրէք այդ վայրու պէտք յարաբերաբար  
 զարգացած ընկերութեան կազմուածքի մը  
 մէջ , եւ իսկոյն վայրագութեան չար նկարա-  
 գիրը երեւան կուզայ :

Նախնական ընտանիքին մէջ, որ այժմեան բազմայոյ ընկերութեան առաջին փուլը կը ներկայացնէր, ընտանիքի պետը, այսինքն այս մարդը, կեանքի ու մահու իրաւունք ունէր իր կնոջ ու իր զաւակներուն վրայ. այն ատեն այդ իրաւունքը չառ ընական կը թուէր եւ վերացեալ կերպով քննուելով չէր կրնար չար նկատուիլ. բայց երբ ընկերութիւնը կազմակերպուիլ սկսած է, երբ վերոյիշեալ կերպով օրէնսդրութիւնը ծնունդ առած եւ կատարելագործուած է՝ հիմնուելով այլեւս ոչ միայն անհատական այլ եւ ընկերական հանրային շահերու վրայ, երբ ընկերութիւնը պէտք է ունեցած բազմաթիւ բազուկներու թշնամի ցեղերուն ղէմ կողուելու համար, եւ իր յազթութիւնը սկսած է ստորագրատուիլ բազմաժնութեանը եւ ցեղին բազմաթիւութեանը, այն ժամանակ՝ կ'ըսենք, ընկերական օրէնսդրութիւնը կ'նոջ եւ տղաքներու իրաւանց պաշտպան է հոնդիսացած եւ հօր ձեռքէն խլած է զերիշխան կարողութիւնը որ մահու եւ կեանքի իրաւունք կուտար անոր իր ընտանիքի անդամներուն վրայ: Այս իրողութիւնը կը տեսնենք մեծ, աշխարհակալ եւ պատերազմասէր ժողովուրդներու պատմութեանը մէջ, ինչպէս օրինակի համար Յունաստանի պատմութեան մէջ:

Այսպէս ուրեմն կը տեսնենք թէ՛ նոյն իրողութիւնը ընկերութեան տարբեր զարգացում ունեցող բաժիններու մէջ բոլորովին տարբեր նշանակութիւն կը ստանայ եւ տարբեր կերպով կը դասուի:

Կ'ուզէ՞ք օրինակ մը անցեալ դարու պատմութեանէն: Աւանդականութիւնը երբ տիեզերական կերպով կ'իշխէր Պրանսայի մէջ, ոչ ոք կը խորհէր անոր ղէմ ձայն բարձրացնել, թէ՛ ընկճողները եւ թէ՛ ընկճուողները ա՛յնքան բնական կը դատէին զայն: Իրերու այդ վիճակը տեսեց մինչեւ որ նոր պահանջներ երեւան ելլելով, նոր ցանկութիւններու, նոր բազմաքններու ծնունդ տուին, եւ Տարվինի ու Վոլթեոի հանճարով ձուլուած, Միքայոյի ամենի եւ հօր ձայնով պաշտպանուած բարոյականի նոր ու լայն ըմբռնում մը, այն է հասարակապետութեան սկզբունքը, աւատական իշխաններն իբրեւ ժողովուրդը կաշկանդող բռնաւորներ նկատել տուաւ:

Ի՞նչ կարող ենք հետեւցընել այս օրինակներէն. սա միայն թէ՛ ո եւ է արարք մը ոչ բարի է եւ ոչ չար, թէ՛ ընկերական յօրինուածութիւններու մէջ է որ մարդկային արարքներն իրենց այդ յարաբերական արժէքը կը ստանան, ծնունդ տալով ընկերական տեսակետով օրոակար կամ վնասակար, ախորժիկ կամ անախորժ հետեւանքներու:

Ահա ուրիշ օրինակ մը. Լաբոններու մօտ երբ ծնողքները խոր ծերութեան հասնելով այլեւս անկարող կ'ըլլան իրենց ապրուստը հայթայթելու, մեծ հանդէսով կը սղաննեն դանոնք: Ահա արարք մը որ մեր տեսակէտով չարագոնց պարսուելի է, քանի որ ծերերու, անկարներու հախար մասնաւոր հաստատութիւններ կը հիմնենք, կը սնուցանենք զանոնք եւ ամէն կերպով կը ջանանք անոնց տանջանքները մեղմացնել եւ կեանքը երկարել, բայց Լաբոններու համար այդ արարքը չարագոնց ընական արարք մըն է եւ բաց առաջ մեծապէս օգտակար եւ կարելի է ըսել անճրաժեշտ արարք մըն է, որովհետեւ այդ սաստուցապատ ապերախտ հողին վրայ, ուր սնունդը այնքան հարուստ չի եւ այնքան դժուարութեամբ ձեռք կը ձգուի, այն անձը որ չի կրնար ինքն իրեն բաւել, տմենամեծ բեռ մը կը դանոնայ ընկերութեան՝ որ այնքան տաժանելի կերպով կ'ապրի արգէն. հետեւաբար այդ անօգուտ բերանները անհետացնելու սովորութիւնը բոլորովին բնական կը թուի այդ ցեղերուն մէջ:

Ուրեմն բարոյականը մեզի համար էականապէս փոփոխական տարր մըն է, բարեշրջութեան տիեզերական մեծ օրէնքին ենթարկուած, որ կը զարգանայ մարդկային ընկերական բարեշրջութեան զուգահեռական կերպով եւ որ՝ տրուած ըլլալով ընկերական յօրինուածութիւն մը (organisme social) որոշեալ պատմական շրջանի մը մէջ, կը ներկայացնէ ոչ միայն այդ ընկերութեան սովորութիւններուն, պայմանադրութիւններուն, բարքերուն, գործարքութեան ամբողջութիւնը, այլ եւ այդ պարուն հեռաբեւ եւ կանխայարձակ մտքերու ներքնատեսութեամբ կազմուած մտաախպար մը՝ որուն անդու կը ձգտի մարդկութիւնը եւ որ յաջորդ դարերուն մէջ տակաւ կ'իրագործուի:

Տղաքներուն բարի կամ չար ծնելուն դալով, ահա թէ՛ ի՛նչ է պատճառորականներուն կարծիքը: Տղաքները կը ծնին միանգամայն չար եւ բարի յատկութիւններով օժտուած, ոչ ամբողջապէս հրէշներ եւ ոչ ալ կատարեալ հրեշտակներ: Արդարեւ, դիտութիւնը մեզի ցոյց կուտայ թէ՛ սաղմը իր արգանդային կեանքի զարգացմանը մէջ, յաջորդաբար կենդանական սանդղդին հետզհետէ աւելի բարձր աստիճաններուն վրայ դասուած կենդանիներու ձեւը կը դրենու, մինչեւ որ վերջապէս հասնի իր ծայրագոյն կէտին, այն է մարդկային սեռի կերպարանքին:

Մնած ժամանակ, աղան, իր զարգացման ընթացքին մէջ հասած է մարդկային վայրենի ցեղերու վիճակին, այնպէս որ անոր նկարա-

դիրը, բնութիւնը, այդ վայրենիներու բնու-  
թեանը կը համադաստիանէ, ուստի եւ ա-  
նոր մօտ կը գտնենք չարը՝ մեր տեսակէտով :  
Բայց պէտք է ինկատի առնել թէ ժառանգա-  
կանութեան տիեղերական օրէնքին չնորհիւ  
անոր բնութեան մէջ կը գտնենք նմանապէս  
քաղաքակրթութեան ազդեցութիւնները որոնք  
մեր տեսակէտով բարին կը կազմեն : Հետեւա-  
բար, տղուն մօտ կը գտնենք բարի եւ չար  
հակումներ մէկը միւսին քով, հակումներ՝ ու-  
րոնց վրայ աւելի երկարօրէն պիտի ծանրա-  
նանք մեր դաստիարակութեան վրայ գրելիք  
յօդուածներուն մէջ :

Ինչ որ ալ ըլլայ այդ բարոյականը, ինչ որ  
ալ ըլլայ այդ մտաախպարը որուն կը ձգտի  
մարդկութիւնը, տեսնենք արդեօք թէ պատ-  
ճառերականութիւնը կը ընայ խոչընդոտ հան-  
դիսանալ, ինչպէս կ'ըսեն մեր հակառակորդ-  
ները, ոչ միայն այդ մտաախպարն իրագոր-  
ծելու, այլ նոյն իսկ այդ ձգտումն անգամ ու-  
նենալու : Արդարեւ մեր հակառակորդները  
կ'ըսեն մեզի. «Ըստ որում կ'ընդունիք թէ  
մարդս ազատ չէ ընելու ինչ որ կ'ուզէ, բա-  
րոյապիտութիւնը, օրէնսգիտութիւնը բոլոր-  
վին աւելորդ բաներ են, քանի որ մարդոց  
մեծամասնութիւնը չպիտի կարենայ հետեւել  
այդ գիտութիւններու աւանդած ճշմարտու-  
թիւններուն, չպիտի կրնայ զանոնք կիրար-  
կել : Նմանապէս երբ մարդիկ գիտնան թէ ան-  
կարող են զանոնք կիրարկելու, չպիտի կըր-  
նան այդ նպատակին հասնիլ, ուստի եւ  
կամօքը պիտի տկարանայ, ջլատուի եւ ջնջուի  
նոյն իսկ : Միւս կողմանէ, անոնք որ կա-  
րող ըլլալով հանդերձ պիտի ուզեն ազատ մնալ  
ընկերական պատուհասէն, պիտի առարկեն  
թէ անկարող են այդ օրէնքներուն հետեւելու :  
Այդպէսով պիտի ջնջուին միանգամայն պա-  
տասխանատուութիւնը, ընկերական նիւթա-  
կան եւ բարոյական բարօրութեան եւ խաղա-  
ղութեան այդ մեծ գրաւականը. մեծարանքը,  
պարսաւը, պատիւը եւ անարդանքը, ընկե-  
րական բարոյականացման այդ մեծ խթանները  
սնտոի բառեր պիտի դառնան, եւ իբր հե-  
տեւանք այդ ամենուն, ամէն բարի, բարձր  
զգացումները պիտի ընկլուզուին անբարոյակա-  
նութեան ովկէանին մէջ, ամենէն ամուր, ա-  
մենէն անմատչելի նկարագիրներն անգամ տե-  
ղի պիտի տան այդ մարդկային դարչանք-  
ները քշող տանող բաղխումին :»

Բնական է որ եթէ ճշմարիտ ըլլար այս ա-  
մենը, եթէ երբեք անկարելի ըլլար պատաս-  
խանել ծանրակշիռ փաստերու այս հեղեղին,  
աւելի նախամեծար կը համարէինք ուրանալ  
քան թէ ընդունիլ այդպիսի ճշմարտութիւն

մը՝ որ այդքան աղետաբեր հետեւանքներ պիտի  
ունենար բարոյականի տեսակէտով :

Բարեբաղդաբար անզէն չենք բոլորովին այդ  
մոլեգին յարձակումներուն դէմ, եւ դժուար  
չէ մեզի համար ցոյց տալ թէ իր հետեւանք-  
ներով այդքան զգուելի վարդապետութեան մը  
չէ որ պաշտպան կը հանդիսանանք : Արդարեւ,  
մօտէն քննենք մի առ մի այդ բոլոր ամբաս-  
տանութիւնները եւ պիտի տեսնենք թէ զբը-  
պարտութիւններ են անոնք պարզապէս եւ չեն  
կրնար դիմադրել լուրջ քննադատութեան մը :

Մեզի կ'ըսեն. «Քանի որ մարդս ազատ չէ  
ընելու ինչ որ կ'ուզէ կամ ինչ որ իրեն կ'ու-  
սուցանեն օրէնսգիտութիւնը եւ բարոյականը,  
այդ օրէնքները եւ բարոյականի կանոնները  
անօգուտ եւ աւելորդ են մարդկութեան մե-  
ծամասնութեան համար :» Այստեղ գիւրբին է  
նկատել թէ մեր հակառակորդները մեզ կը շը-  
փոթին ճակատագրականներուն (fataliste) հետ :  
Արդարեւ ճակատագրականը կ'ըսէ. «Արարիչը  
մեզ այսպէս է ստեղծած, չենք կրնար ուրիշ  
կերպով դործել, հետեւաբար եւ աւելորդ է  
աշխատիլ : Ամէն ինչ նախախնամուած է աշ-  
խարհիս վրայ աստուածային ձեռքով : Ինչ որ  
տեղի կ'ունենայ՝ գրուած է Արարչին մեծ հաշ-  
ուաստարին մէջ, ու ո՛չ մէկ փոփոխութիւն,  
ո՛չ մէկ խանդարում չի կրնար տեղի ունենալ  
իրողութիւններու շարքին, յաջորդութեան,  
տեւողութեան մէջ, մեր ամէն արարքները  
կը կատարուին մեր ազատ կամքին խաբկա-  
տիք ազդեցութեան սակ, կամք՝ որ ուրիշ  
քան չէ բայց եթէ նախախնամութեան միջա-  
մտութիւնը» : «Նախախնամութիւն» բառը մե-  
զի կը յիշեցնէ քրիստոնէական կրօնքի էա-  
կան մէկ աւանդութիւնը, կրօնքը մեզի կ'ու-  
սուցանէ թէ Աստուած իր ամենակարողութեամբ  
նախախնամած է ամէն ինչ, ուստի եւ գիտէ  
մեր ապագայ արարքները իրենց ամենէն հե-  
ռաւոր, ամենէն թաքուն մանրամասնութիւն-  
ներուն մէջ, ուստի եւ մեր կամքը ազատ չի  
կրնար ըլլալ, քանի որ Արարիչը նախասահ-  
մանած է զայն : Կը տեսնենք որ ճակատագրա-  
կանութիւնը եւ քրիստոնէական կրօնքը այս տե-  
սակէտով բոլորովին նոյն դաւանանքը ունին :  
Բայց ինչ որ յստկանչանական է կրօնքի երկ-  
դիմի նկարագրին, սա է թէ ճակատագրա-  
կանութիւնը քաջութիւն է ունեցած իր վատ-  
թար վարդապետութեան հետեւանքներն ըն-  
դունելու, հետեւանքներ՝ որոնք բացարձակա-  
պէս անխուսափելի են եւ զոր պիտի պարզենք  
իսկոյն, իսկ ընդհակառակն կրօնքը, հակասե-  
լով ինք իրեն, կ'ընդունի միանգամայն ա-  
զատակամութեան գաւանանքը, որ բոլորովին  
անհաշտ է նախախնամութեան սկզբունքին  
հետ :

Շատ որոշ է թէ պատճառաւորականութեան ղէմ այս առաջին առարկութիւնը կէտ առ կէտ կը պատշաճի ճակատագրականութեան, քանի որ ճակատագրականն է որ՝ ամէն ինչ նախա սահմանուած համարելով, եւ իր կամքը անկարող դատելով աստուածային կամքին միջամտութիւնը խանգարելու կամ փոխելու, անդործութեան կը մատնէ ինքզինքը. այս վարդապետութիւնն է ուրեմն որ այդպէսով կը ջլատէ անհատական կամ ընկերական գործունէութիւնը եւ անօրոշտ կը դարձնէ օրէնս գիտութեան եւ բարոյագիտութեան գոյութիւնը: Մինչդեռ պատճառաւորականութիւնը, որ մարդկային կամքը կը նկատէ իբրեւ արդիւնք ներքին կամ արտաքին, ժառանգական կամ ստացիկ շարժառիթներու, ընդհակառակն ամէն կերպով օգտակար եւ բարոյականացուցիչ կը նկատէ բարոյական օրէնքներու գոյութիւնը, որովհետեւ նոյն իսկ այդ օրէնքները արտաքին բարոյական շարժառիթներ կը գառնան մարդկային գործունէութեան՝ զոր բարելաւելու կը նպաստեն, նոր եւ փրկարար ձգտումներ ստեղծելով մեր հոգեկան սահմաններուն մէջ: Փոխանակ մեր կամքը ջլատելու, պատճառաւորականութիւնը կը խթանէ զայն. ցոյց տալով մեզի մեր անկատարութիւնները, մեր թերութիւնները, եւ միւս կողմանէ այն դժուարութիւնները, այն խոչընդոտները որոնց պէտք է բաղխինք մեզ բարոյապէս կատարելագործելու համար, այդպէսով մեզ կը զրգոէ այդ դժուարութիւններու ղէմ յաղթական կերպով կռուելու համար հարկաւոր բարոյական ուժերով զինելու, որպէս զի մեր անձը այդ պայքարին մէջ չընկճի:

Ահա այստեղ է որ կը տեսնենք թէ ինչպէս աշխատեամբութիւնը արդելք կը հանդիսանայ այդ բարձր ձգտումներուն փթթմանը եւ անոնց իրագործմանը: Ազատականը ինքզինքը կարող կը կարծէ, ուղամ վայրկեանին, նոյն իսկ ամենագիտարին արարքը կատարելու. իրեն համար՝ ոչինչ չի կրնար զիմագրել իր կամքին. բաւական է որ ուղէ, իսկոյն ամէն զրուարութիւն, ամէն խոչընդոտ կը հարթուի. ուստի եւ այդ հաւատքով մարդիկ յաճախ անբաւական կը գտնեն իրենց բարոյական ուժերը, իրենց անհնազանդութիւնը որոշումներն ի գործ դնելու ժամանակ: Անոնք օրինակ մը, որ բացորոշ կերպով ցոյց պիտի տայ մեր այս ըսածին բացարձակ ճշմարտութիւնը: Ահա երկու ալքօլամոլներ. մէկը ընկերական բարձր դասակարգին կը պատկանի, իսկ միւսը ընկերութեան մրուրովն է շաղախուած: Բժիշկ մը երկուքին ալ խորհուրդ կուտայ այդ ախտը ջնջել: Անոնցմէ առաջինը ստացած է լաւ դաս-

տիարակութիւն մը, այնպէս որ կ'ըմբռնէ բժիշկին արդելումին պատճառները, այն վերտանգները որոնց ենթարկուած պիտի ըլլայ եթէ շարունակէ իր այդ մոլութիւնը. անոր սրտին մէջ զարդացած են բարոյական բարձր զգացումները. իր ընկերական գիրքը, իր նիւթական միջոցները, իր ստացած դաստիարակութեանը հոգւոյն մէջ զարգացուցած ճաշակները կրնան ուրիշ զբաղումներ եւ համարժէք վայելքներ եւ հաճոյքներ հայթայթել իրեն. իր ժառանգականութիւնը, մէկ խօսքով՝ իր ամբողջ մտաւորական եւ բարոյական անձնաւորութիւնը, իրեն թոյլ կուտան այդ ախտը մէկդի ձգելու:

Իսկ երկրորդը՝ խեղճ աղքատ գործաւոր, զուրկ ամէն դաստիարակութենէ, գինեմոլ հօրմէ մը ծնած, իր ամբողջ կեանքը անբարոյական, ցոփ եւ ամէն տեսակ մոլութիւններով ապականուած միջավայրի մը մէջ անցուցած, յոտի օրինակներ միայն ունեցած իր աչքին առջեւ, եւ որուն միակ հաճոյքն է եղած՝ ամբողջ օրը գրաստի նման աշխատելն ետքը գինետուն մտնել եւ քանի մը ընկերներու հետ մեղմացնել իր կեանքի դառնութիւնները ալքօլի եւ ծխախոտի թանձր շոգիներուն մէջ շրջապատելով զանոնք: Բնական է որ այդ երկրորդին համար բժիշկին խօսքը նոյն կարեւորութիւնը, նոյն կշիռը չի կրնար ունենալ եւ յաճախ չլընալով նոյն իսկ անոր ճշգրիտ եւ իսկական նշանակութիւնը եւ կարեւորութիւնը ըմբռնել, վերոյիշեալ շարժառիթները յաղթական կ'ըլլան այն պայքարին մէջ զոր կը մղեն բժիշկին տուած խորհուրդին յառաջ բերած արտաքին բարոյական շարժառիթին ղէմ, եւ գործաւորը կը շարունակէ անձնատուր ըլլալ իր բարոյազեղծ մոլութեանը:

Եթէ այս պարագային մէջ բժիշկը պատճառաւորական է, լաւ կ'ըմբռնէ որ եթէ երբեք այդ գործաւորը չէ հետեւած իր խորհուրդին, պատճառը այն է որ այդ վերոյիշեալ պայքարին մէջ իր պառած խորհուրդին յառաջ բերած բարոյական շարժառիթը շատ ակար է եղած, կ'ըմբռնէ թէ անհրաժեշտ է այդ բարոյական շարժառիթը զօրացնել եւ համապատասխան ընել զայն իրեն զիմագրող դժուարութիւններու եւ խոչընդոտներու մեծութեանը, եւ փոխանակ մէկ անգամ խորհուրդ տալով գոհանալու, կը ջանայ բազմազան եղանակներով անոր երեւակայութիւնը տպաւորելու, անոր օրինակներ տալով, ալքօլամոլութեան անհամար աղէտներուն մատով դպչիլ տալով անոր՝ եթէ կարելի է այնպէս ըսել, անոր ցոյց տալով ալքօլամոլներու գիականներուն վերայ՝ անոնց ստամոքսին, անոնց լեարդին, անոնց սրտին եւ երակներուն կրած խորին եղծումները, այնպէս որ այդ ամէն ծանօթու-

Թիւնները՝ արտաքին մտաւորական շարժա-  
ռիթմեր կարենան բաւական շօրաւոր ըլլալ  
յաղթելու անոր մոլութեանը, որ ներքին  
Ֆիզիքո-բարոյական շարժառիթ մըն է: Մինչ-  
դեռ ազատակամը՝ որուն համար շարժառիթ-  
ները բնաւ կարեւորութիւն չունին, փոխա-  
նակ այդ թշուառ գործաւորին մօտ՝ որ չէ կըը-  
ցած բժիշկին խորհուրդին հետեւիլ, մտաւոր  
եւ բարոյական անկարողութիւն տեսնելու,  
բարի կամքի պակասութիւն կը տեսնէ, զայն  
կը պարսաւէ եւ անարժան կը դատէ զայն իր  
բարեացակամութեան առարկայ ընելու:

Այստեղ կը ներկայանան պատասխանատու-  
ութեան, պարտաւի, գովեստի, արժանիքի,  
անարժանութեան խնդիրները՝ զորոնք յաջորդ  
յօդուածով մը մանրամասն պիտի քննենք,  
հետեւաբար եւ չենք ծանրանար առ այժմ ա-  
նոնց վրայ: Նկատել կուտանք միայն թէ  
պատճառաւորականը հաւատարմապէս գործե-  
լով այնպէս ինչպէս գործել կուտայ իր դա-  
ւանած վարդապետութիւնը, բնական կերպով  
բարոյականացնել կը ձգտի այդ գործաւորը  
վերոյիշեալ մասնաւոր պարագային մէջ. իսկ  
ընդհակառակն ազատակամը նոյն պայմաննե-  
րու մէջ գործելով ոչ մէկ ջանք չ'ընելու այդ  
թշուառ էակը բարոյապէս բարձրացնելու:

Ահա արդիւնքը. դատեցէ՛ք: Առանց տա այժմ  
երկարօրէն ծանրանալու պարտաւի, գովեստի,  
արժանիքի, պատիժի, պատասխանատու-  
թեան խնդիրներու վրայ, պէտք է սակայն  
ցոյց տանք թէ պատճառաւորականութիւնը  
բնաւ չի ջնջուր դանձուք, որովհետեւ արտա-  
քին բարոյական շարժառիթներ են մարդկա-  
յին գործունէութեան, եւ իբր այն՝ կը նը-  
պատեն ընկերական բարոյականացման ամե-  
նակարեւոր գործին իրականացմանը: Բնդհա-  
կառակն ճշմարիտ ազատակամը, ինչպէս տե-  
սանք, աւելորդ կը համարի պարսաւել, գովել,  
քաջալերել, քանի որ մարդկային կամքը ա-  
զատ է եւ հակառակ այդ ամենուն, կրնայ իր  
ընտրած ուղղութեամբ գործել տալ մեզի:  
Ուրեմն այն ամէն ամբաստանութիւնները ա-  
մէն կերպով կը պատշաճին մեր հակախօս-  
ներուն:

Համառօտ կերպով տեսնենք այժմ թէ ուրիշ  
ինչ մեծ թերութիւններ ունի ազատակամու-  
թիւնը, թերութիւններ՝ որոնք զայն բո-  
լորովին բարոյազեղծ վարդապետութիւն մը  
կը դարձնեն: Ցոյց տանք նմանապէս այն ա-  
մենամեծ բարիքներու ազրիւրը որ կը ծնի  
պատճառաւորականութեան բեղուն եւ փրկա-  
ւէտ ծոցէն:

Նետենք ազատակամ մը ընկերական յարա-  
բերաբար զարգացած յօրինուածութեան մը

մէջ, իր բոլոր բարեկամները զայն կը ճանչ-  
նան իրբեւ պատուաւոր անձ մը, լաւ կըը-  
թուած, բարձր գաստիարակութիւն ստացած,  
մտաւորապէս եւ բարոյապէս զարգացեալ մի-  
ջավայրի մը մէջ մոծցած եւ ապրած. բայց  
զիտենք որ եթէ բա ի է ան, պատուաւոր եւ  
բարեկիրթ, մինչեւ այժմ պատճառը այն է որ  
ուղած է այդպէս ըլլալ, իբր շարժառիթ իր  
կամքն ունենալով միայն. հետեւաբար ոչինչ  
կրնայ մեզ ազանովցնել թէ պիտի շարունա-  
կէ իր այդ անթացքը, թէ չպիտի շեղի այդ  
ուղիղ ճամբէն զոր ընտրած էր մինչեւ այժմ,  
հետեւաբար ոչ ոք կրնայ անպայման կեր-  
պով վստահիլ անոր խօսքին եւ անոր ասու-  
գայ ընթացքին. քանի որ անոր կամայականու-  
թենէն է կախուած փոխել զայն ամէն վայր-  
կեան: Ի՞նչ պիտի ըլլային այս պայմաննե-  
րուն մէջ ընկերական յարաբերութիւնները.  
Ի՞նչպէս կարող էր գոյութիւն ունենալ սո-  
ւետուրը՝ ուր վստահութիւնը, պատուաւ-  
րութիւնը այնքան մեծ դեր կը կատարեն.  
Ի՞նչպէս կրնայինք մեզի մտերիմ բարեկամներ  
ընտրել եւ ի՞նչպէս խորհրդակիցներ ունենալ  
մեր ամենէն թաքուն գիտաւորութիւնները ա-  
նոնց յայտնելու եւ անոնցմէ խորհուրդ խն-  
րելու համար: Այդպէսով ընկերութիւնը բա-  
րոյապէս եւ նիւթապէս կը քայքայուէր եւ  
մարդիկ պարտաւորուած կ'ըլլային վերադառ-  
նալ վայրենիներու տնտեսական վիճակին,  
ուր վստահութիւնը գոյութիւն չունենալով ա-  
մէն մարդ իր պէտքերը անձնապէս կը գոհա-  
ցնէր ինքն իրեն բաւելով:

Այս ամենը ցոյց կուտայ թէ նոյն իսկ ամե-  
նէն համազուտ ազատակամները գործնակա-  
նին մէջ կը խորհին, կ'ապրին. կը գործեն  
իրբեւ ճշմարիտ պատճառաւորականներ, ապա  
թէ ոչ իրենց դուստանանքին հաւատարիմ կիր-  
արկութիւնը ամենավատթար եւ ազեաաբեր  
հետեւանքներու պիտի յանդէր, ինչպէս տե-  
սանք քիչ առաջ: Բայց այնու հանդերձ երբ  
խնդիրը կամքի ազատութիւնը պաշտպանելու  
վրայ է, իսկոյն իրենց բովանդակ ուժովը  
կը ջանան ազարացնել եւ պաշտպանել իրենց  
այդ համոզումը եւ խուսափելու համար այդ դի-  
տական հիմերու վրայ հաստատուած փաստերու  
եւ պատճառաբանութեանց ցանցէն, մեզի կ'ըսեն  
«Հակառակ ձեր այդ ամին ըսածներուն ներք-  
նապէս կը զգանք թէ ազատ ենք այս ինչ կամ  
այն ինչ բանն ընելու անխտրաբար եւ միեւ-  
նոյն վայրկեանին»: Այս անձնական զգաց-  
ման մը արդիւնք եղող առարկութեան, որ  
պարզապէս պատրանք մըն է՝ ինչպէս պիտի  
ապացուցանենք քիչ վերջը, կրնանք նոյն-  
քան եւ նոյն իսկ շատ աւելի իրաւունքով  
պատասխանել իրենց. «Միթէ ձերունի մայր

մը՝ որ իր վտարանդի դաւեկէն նամակ մը կը ստանայ որով իր անհուն սէրը եւ կարօտը կ'արտայայտէ ան. ազա՞տ է սամբուցնելու իր աչքերը որոնք կը լեցունին արցունքով՝ արդիւնք անոր անբաւ խանդաղատանքին: Միթէ ազա՞տ է սիրահայր կասեցնել արեւնի բուռն կոնակները որ ի տես իր պաշտելուոյն իր այտերը կը դունագեղեն եւ սիրտը ուժգին կը ըստխնայեն: Ո՞վ կրնայ ազատ ըլլալ իր զայրոյթը զսպելու անարդար կերպով բարոյական մահուան դատապարտուած անձի մը հոգեկան տառապանքները լսելով: Դիւրին է մնալ համար բազմապատկելի այս օրինակները՝ որոնք շատ աւելի ընդունելի են եւ համոզիչ քան թէ առանց ասպոցոցի, առանց դիտական արբադործութեան անձնական զգացման մը արտայայտութիւնը: Բայց կարծեմ թէ պէտք չունինք այս յաւելուածական փաստերուն վրայ ծանրանալու, որովհետեւ մեզի այնպէս կը թուի թէ մեր նախորդ յօդուածին մէջ առաջ բերած դիտական փաստերը բաւական են եւ բացարձակապէս անհերքելի:

Ինչ որ առաջ կը բերէ կամքի պատուութեան պատրանքը, այն է որ, նախ, ազատականները կ'անդրտանան այն տիեզերական օրէնքը թէ՛ «Չկայ արդիւնք մը առանց պատճախի», թէ՛ հետեւաբար մեր կամքը, բնական երեւոյթ՝ նման ամէն բնական երեւոյթներուն, չի կրնար գոյութիւն ունենալ առանց պատճառի. երկրորդական այնպիսի աննշան արարքներ, ամէն կարեւորութենէ՛ թողորովին զուրկ, որոնց պատճառները աննշարելի կը մնան, մինչդեռ մեր կեանքին մէջ ամենափոքր կարեւորութիւն ունեցող արարքները կը փրկուած են կը դանկնք միշտ: Օրինակի համար՝ ոճիր մը գործուած է, խիղճն ատոր պատճառները մեր հետաքրքրութեան առարկայ կ'ըլլան. մէկը, հակառակ իր սովորութեան, մեղի նկատմամբ իր ընթացքը կը փոխէ յանկարծական կերպով. խիղճն այդ փոփոխութեան պատճառները փնտրելու կ'եւլենք: Բայց երբ մէկը մեզի հարցնէր թէ ինչու համար մեր մատը սեղափոխեցինք այնինչ պարագային մէջ, յաճախ չպիտի կարենայինք ճշգիւ պատասխանել: Նմանապէս կան չափազանց կրնա՞նք, բաղձայօզ հոգեկան երեւոյթներ որոնց շարժասիւթները ճշգիւ գտնել շատ դժուարին է եւ որոնք առանց պատճառի կը թուին նախ եւ առաջ, բայց այդ պատճառ մըն է միթէ կարծելու թէ այդ կարգ արարքները բացառութիւն կը կազմեն այն օրէնքին որ ինչպէս տեսանք բացարձակապէս անհերքական է:

Մեր յօդուածը վերջացնելու համար մեզի կը մնայ այժմ ցոյց տալ թէ ինչպէս պատճառորակութիւնը ծնունդ կուտայ ամենէն մարդասիրական, ամենէն վեհ զգացումներուն:

Սրբարեւ, մարդկային արարքներու ճշմարիտ պատճառներուն իրազէկ գտնալով եւ զանոնք նկատելով անոնց հեղինակներուն ժառանգականութեան, միջավայրին, դատարարականութեան անմիջական արդիւնքներն եւ ոչ իրրեւ պտուղը անոնց ազատ կամայականութեանը, կը սորվինք ներդաժիտ ըլլալ մարդկային յոտի արարքներուն, ներդաժնութիւնը կը զարգացնէ մեր մէջ ընկերականութեան (sociabilité) զգացումները: Կը ջնջէ ատելութիւնը մարդոց մէջէն եւ կը զօրացնէ համակրութեան բնագոյները, (որոնք կ'ընդլայնեն սիրոյ սահմանները ի վնաս ատելութեան սահմաններուն) կը զարգացնէ ալլասերական զգացումները եւ սէրը այդպէսով առաւելաւ կը իր գեր մը կը ստանայ ընկերական թատերաբեմին վրայ: Ո՞չ ապաքէն սէրը եւ ներդաժնութիւնը անբաժան ատրիբուտ են, որոնք զիրար կը զօրացնեն. ո՞ր մարդը, ո՞ր սիրահարը իր սիրոյ առարկային ներդաժիտ չ'ըլլար: Սէրը այն զգացումն է որ մեր բարոյական մտաւիպարը պէտք է ըլլայ, որ մեր կոչումն է՝ եթէ կարելի է այսպէս ըսել, որուն համար սահմանուած ենք մենք, (աղայ՝ մեր ծնողքը կը սիրենք, երիտասարդ՝ կիներն է որ մեր սիրտը կը բարբախեցնէ, ալեւոր՝ մեր որդիքն են որ մեր պաշտամունքին առարկայ կը դառնան): Ինչպէս անհատական նոյնպէս եւ ընկերական կեանքին մէջ մարդս յաջորդաբար սիրած է իր ընտանիքը, իր ցեղը, իր ազգը եւ պէտք է հասնի իր մտաւիպարին, այն է սիրել մարդկութիւնը՝ առանց ազգայնական խարութեան: Ս.յս մտաւիպարը իրագործելու համար ամենակարեւոր պայման մըն է պատճառորակութեան վարդապետութեան ծաւալումը, ինչպէս տեսանք: Նմանապէս արդարութեան եւ դատարարականութեան սեռակէտով, սէրը՝ արդիւնք պատճառաւորականութեան՝ ամենամեծ գերը կատարելու կոչուած է, ինչ որ մեր յաջորդ յօդուածներուն նիւթը պիտի ըլլայ:

ՏՐ . ՏՐԴԱՏ ԵՍՍ.ՅԵԱՆ

Պեզիէ



### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

— 0 —

— ԲՄՇԻՆՉԱՂՆԱՆՏԻ ՏՈՒՑԱՀԱՆԴԵՍՐ. —

Պ. Էսմոն Բիլոն, Փրանսացի տաղանդաւոր երիտասարդ գրագէտը, հետեւեալը կը գրէ, « Լա Բլիւմ » գրական-գեղարուեստական կիսամսեայ թերթի Նոյեմբեր 15ի թուոյն մէջ, Պ. Բաշինջաղեանի Յուլյանոյնի մասին. « Պուլլաւ Մոնթառնաս, հանդարտ ու համեստ աշխատանոցի մը մէջ, ուր Պ. Արչակ Զօպանեան գիտ կ'առաջնորդէ, Պ. Գէորդ Բաշինջաղեան, հայկական գոյրոցին լաւագոյն նըկարիչներէն մին, երեսունի չափ նկարներ յուցադրած է : Հաւատարիմ նօթագրութիւններ Վրաստանի եւ Կովկասի բնապատկերներու, երեւոյթներ՝ պարզօրէն ու լրջօրէն նկարուած՝ լիճերու, դաշտի, լեռներու եւ ծովի, այդ գործերը ամփոփեալ տպագրութիւնը կուտան ջինջ ու անգործ խառնուածքի մը, ամբողջ խոկումով ու հանդարտութիւնով շինուած : Պ. Բաշինջաղեան մասնաւորապէս կը յաջողի լեռը նկարել այդու կամ վերջալոյսի պահուն, երբ կատարները ամպերու մէջ կը կորսուին, եւ ունի միանգամայն գիշերուան շատ ուշադրաւ « էֆէ » ներ : Միակ մեղադրանքը զոր կարելի է ընել իրեն, տեսակ մը չորութիւն է երանգներուն մէջ եւ մանրամասնութեանց ծայրայեղ սէր մը՝ որոնք այլ եւս մեզի անսովոր կ'երեւան, թերութիւններ որ սակայն ամբողջութեանը մէջ կը կորսուին եւ չեն խանգարեր արժէքը զոր հայ բնանկարչին գործը ունի՝ իր գիտակից դժարութեամբն եւ հիմնաւոր ուսումնասիրութեամբը : Պ. Գէորդ Բաշինջաղեան, արդէն ծանօթ՝ Ռուսիոյ եւ Գերմանիոյ մէջ, արժանի է որ Փրանսայի մէջ ալ ճանչցուի : Իր արուեստը սովորականէն տարբեր է : Պ. Պ. Զաքարեանի եւ Էսկար Շահինի արուեստին հետ, պատուարբեր է ան իր անբաղդ ազգին : »

Պ. Բաշինջաղեան իր գործերէն մին նուիրած է Բիէն Քիլեաոին՝ անոր հայասիրական գործունէութեանը համար իր երախտադիտութիւնը յայտնելով. Քիլեաո իր շնորհակալութիւնները սեղծած է անոր՝ հետեւեալ նախկով :

« Պարոն,  
 « Էսմոն Փիլոն բարեկամիս նօթը « Լա Բը-

լիւմ » ին մէջ՝ արդէն փափաք ներշնչած էր ինծի ձեր գործերը տեսնելու եւ սիրելու, — եւ անա՛ կրէի իմ հայ բարեկամներու շատ փափուկ մէկ հաճոյակատարութեամբը՝ սեղանիս վրայ գտայ ձեր Արարատի շատ դեղեցիկ մէկ բնանկարը. ուրեմն այլեւս ուրիշին կարծիքին վրայ հիմնուելով չէ որ պիտի ճաշակեմ ձեր շատ լայն ու շատ տպագրիչ արուեստը :


« Թոյլ տուէք ինծի, պարոն, ձեզ շնորհաւորել գրեթէ ինչպէս հայրենակից մը. դուք անգամ մը եւս ապացուցիք թէ ձեր ցեղը, արուեստագէտներու եւ բանաստեղծներու սնուցից, պէտք չէ եւ կարելի չէ որ անհետանայ աշխարհիս երեսէն՝ առանց ամբողջ մարդկութեան բարոյական ու մտաւորական մեծ կորուստ մը պատճառելու : »

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷ. — Կովկասեան թերթերը ծանուցին Խորէն Եպիսկոպոս Ստեփանէի մահը : Այդ մահը կարեւոր կորուստ մըն է ուսանայ հասարակութեան համար : Իբրեւ հրապարակագիր, իրբեւ քարոզիչ, իրբեւ բանասէր, Խորէն Ստեփանէ շատ ազնիւ ու վառվռուն գործունէութիւն մը ունեցած է : Գլխաւոր գործը զոր կը թողու, եւ որ կը բաւէ իր անունը տեւական դարձնելու Հայոց ժամանակակից գրական պատմութեան մէջ, Խորէնացիի գրքին աշխարհաբար թարգմանութիւնն է, — մեծապէս օգտակար ձեռնարկ մը, որուն առաջին փորձողն եղաւ ինքը, եւ միակն ալ է սակաւին :

ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԾՈՒ ՄԸ. — Մոսկուայէն մեզի կը գրեն թէ շուտով լոյս պիտի տեսնէ այնտեղ հայերէն լեզուով գրական ժողովածու մը, խմբագրութեամբ մեր աշխատակից Պ. Վ. Փափաղեանի : Այդ ժողովածուն պիտի պարունակէ միայն ինքնուրոյն եւ անտիպ գրուածքներ, եւ պիտի բաղկանայ 3-400 մեծադիր էջերէ՝ շքեղ տպագրութեամբ :

ՓԱՓԱՂԵԱՆԻ « ՀԱՅ ԲՈՇԱՆՆԵՐ » Ը. — Նմանապէս Մոսկուայէն մեզի կը հաղորդեն թէ Պ. Վ. Փափաղեանի « հայ բոշաններ » ու մասին մէկ ինքնատիպ աշխատութիւնը վերջերս կարգացուեր է կայսերական ազգաբնակից ժողովին մէջ եւ ժողովը որոշեր է դայն հրատարակել՝ պատկերներով՝ իր « Ազգաբնակից հանգէս » ին մէջ, եւ նախագահ Պ. Միլլէրի առաջարկութեամբ : Պ. Փափաղեան անգամ սնուանուեր է այդ ժողովին :

Imp. A. PANAVERT, 7 et 9, rue des Fossés-Saint-Jacques, Paris



«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՊԻԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիսը կը հրատարակուի ամիսը մէկ անգամ :  
Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 2 տոլար  
(Ամերիկա) 5 բուլլի (Ռուսիա) . վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ),  
1 տոլար (Ամերիկա), 3 բուլլի Ռուսիա :  
ԲԱԺԱՆՈՐԴԱԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :  
Ձեռագիրները ետ չեն դարձուիր  
Կ'ընդունուին ազգեր :  
Նամակ , յօդուած եւ բաժանորդագրին ղրկել հետեւեալ հասցէին :

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

ԱՆԱՀԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

ՎԱՌՆԱ	Պարոն Տր. Յ. Ս. Փափազեան
ՌՈՒՍՃՈՒՔ	» Նշան Ս. որոսեան
ՏԻՎԻՊՊԷ	» Ա. Մ. Տեմիրճիպաչեան
ՊՈՒՔՐԷՇ	» Արիս Լազար
ԴԱԻՐԷԺ	» Տր. Կ. Փաշաեան
ՆԻԻ-ՇՈՐՔ.	» Պ. Կատարեան
ԲՐՈՎԻՏԷՆՍ (Ամերիկա)	» Նազարէթ Քաթեոսեան
ԻՍԹ-ՈՒՕԸԹՐԹԱՈՒՆ. (Մաս . , Ամերիկա)	» Մանուկ Գալստեան
ՈՒՍԹՐՐ. (Մաս . , Ամերիկա)	» Երուանդ Յակոբեան